





ՆԻԿՈԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԵՒ

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**

ԳԱՐԶԻՆ ՀԱՅԿԱԶԱՆՅ ԼԵՀԱՍՏԱՆԻ  
Ի ԿԱԹՈԼԻԿՈՒԹԻՒՆ.

Գ Ր Ե Ա Ց

ԳՆՐԻԻԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ

ԹԵՄԱԿԱԼ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ  
ԵՒ ԻՄԵՐԻԹԻ.

— ❄ ❄ —  
**Ի ՎԱԳԱՐԱՆՊԱՏ**

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՆԻ

28

Ա-53

ՌՅԻԶ. — 1877



ՆԻԿՈԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ

✓  
(2)

28

ԵՒ

Ա-53

# ՊԵՏԱՐՈՒԹԻՒՆ

ԳԵՐՉԻՆ ՀԱՅԿԱԶԱՆՅ ԼԵՀԱՍՏԱՆԻ

Ի ԿԱԹՈՂԻԿՈՒԹԻՒՆ .

Գ Ր Ե Ա Ց

ԳՆԱԲԻԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵՆ

ԹԵՄԱԿԱԼ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ

ԵՒ ԻՄԵՐԻԹԻ .

—

Ի ՎԱՂԱՐՁԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՅՆԻ

ՌՅԻԶ. — 1877.

2002

AI  
17099



ՆԻԿՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԵՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳՆՐՉԻՆ ՀԱՅԿԱԶԱՆՅ ԼԵՀԱՍՏԱՆԻ

Ի ԿԱԹՈՒՒԿՈՒԹՒԻՒՆ.

Հռոյմէական կաթողիկոսութեան մեր  
աղգին մէջ մտնելուն պատմութիւնը  
Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմու-  
թեան հետաքրքրական եւ միանգամայն  
մեծապէս ցաւալի մասերէն մէկն է.  
նորա եւս մի մասն է Լեհաստանի Հայ-  
ոց ի կաթողիկոսութիւն գառնալուն ող-  
բերգական տեսարանը, որ գրեթէ եր-  
կու հարիւր յիսուն տարի յառաջ Եւ-  
ջիով (Լէմպէրկ) քաղաքին մէջ կատա-  
րուեցաւ՝ գլխաւորապէս Նիկոլ անու-

նով անարժան եպիսկոպոսին բանեցու-  
ցած հնարքներովն ու հանած հալա-  
ծանքներովը. տեսարան՝ որ արժանի  
էր անմոռանալի մնալ ո՞ր եւ իցէ ազ-  
գասէր Հայկազին, եւս առաւել Լեհաս-  
տանի նուազեալ Հայոց, աչքին առաջը:

Նիկոլի հալածանաց պատմութիւնը  
արդէն հրատարակուած էր երեք հա-  
մառօտ յօդուածներով Մասեաց Աղա-նէ  
օրագրոյն մէջ ի Փարիզ յամին 1857:  
Այն յօդուածները յարմար դատել էր  
ժամանակիս հանգամանացը Պօլսոյ Մա-  
սե-նէ լրագիրը, եւ տաճկերէն թարգմա-  
նութեամբ հրատարակելով իւր էջե-  
րուն մէջ՝ ջանացել էր քաջալերել Տաճ-  
կաստանի հռովմէական Հայոց այն մա-  
սը՝ որ Նիկոլի հետ ոչ սակաւ նմանու-  
թիւն ունեցող առաջնորդի մի ձեռքէն  
փախչիլ ազատիլ ցանկալով, իւրեանց  
երեսը դէպի ազգային արեւելեան մայր  
եկեղեցին դարձուցած էին: Մեք Ման-



զումէին գոլելի նալատակին վերայ այս  
 եւս աւելցնել արժան համարելով՝ որ  
 նոյն խակ Լեհաստանի մէջ մնացած, եւս  
 եւ Ռուսաստանի այլ եւ այլ կողմերը  
 գտնուած Հայ կաթողիկոսները հասկա-  
 նան՝ կամ գոնէ չմոռանան՝ թէ իւրեանց  
 նախնիքը ինչ կերպով օտարացել են  
 իւրեանց հայրենի եկեղեցիէն, — նոյն  
 յօդուածներն նորէն աչքէ անցընելով՝  
 առանձին կը հրատարակեմք:

Նիկիոյի պատմութեան գրեթէ մի  
 միայն աղբիւր ունիմք Գաւրիթեցի Ա-  
 ռաքել արգիւնական վարդապետին  
 պատմագիրքը, որոյ խօսքերը քաղած է  
 իւր պատմութեանը մէջ նաեւ Հայրն  
 Միքայէլ Չամչեան եւ Առաքելի բարե-  
 սիրտ եւ երկիւղած՝ հետաքրքիր եւ ող-  
 ջամիտ բնաւորութիւնը՝ հանդերձ ճշ-  
 մարտախօս եւ կարգաբան ոճով՝ ամե-  
 նայն հաւատարմութեան արժանի ա-  
 րած է իւր պատմած անցքերը. մանա-

ւանգ որ ժամանակակից լինելով այն  
անցքերուն, եւ շատ բանի անձամբ ա-  
կանատես, գեղեցիկ պարզամտութեամբ  
մի առ մի կպատմէ ազգիս այն ժամա-  
նակի խեղճութիւններն: Նորա պատմա-  
գիրքը, ինչպէս յայտնի է, տպագրած է  
Երեւանցի Ռսկան վարդապետը յՍմբռ-  
տերգամ 1669 ին :

Նիկոլի համառօտ կենսագրութիւնը  
կայ նաեւ Լեհերէն լեզուով հրատա-  
րակուած պատուական գրքի մէջ, որոյ  
վերնագիրն է « Վարք հռչակաւոր Հայ-  
ոց Լեհաստանի », եւ տպուած է Իլ-  
վով քաղաքը 1856 ին. հեղինակն է Հայ-  
ազգի Գոմինիկեան Սաղուիկ քահանայն  
Պարոնչ ( այս ինքն Պարոնեանց ), որոյ  
ուշ արթընցած ազգասիրութիւնը ան-  
տարակոյս յաղթուելով իւր Հռովմէա-  
կան գաղափարներէն, չէ կարողացել  
ազատ մնալ աշառութենէ եւ կողմ-



սլատմութենէն զատ ուրիշ աղբիւրներ  
 ունեցած լինէր ձեռքը, մանաւանդ Ա-  
 ռաքելի սլատմագիրքը:

Ա.

Մեր աղգիս անիշխանութեան ժամա-  
 նակին ցաւալի սլատմութեան մէջ աւելի  
 եւս աղետալի, միանգամայն եւ հետա-  
 քրքրական են այն դէպքերը՝ որովք  
 Հայաստանէն խուժք խուժք օտար եր-  
 կիրներ փախչող Հայկազունք զանազան  
 փորձանաց հանդիպեցան, եւ վերջապէս  
 իւրեանց աղգութիւնը բոլորովին կամ  
 ըստ մասին կորսընելով թշուառացան  
 ու փճացան: Հայաստանի աւերակացը  
 ներքեւ թաղուած Հայերն գոնէ այս  
 մխիթարութիւնս ունէին ( եթէ կարող  
 եմք մխիթարութիւն ասել ) որ իւրեանց  
 վերայ փլած հողն ու աւաղը իւրեանց  
 ցանկալի եւ սլատուական նախահարց

արիւնոյն ու արտասուօքը շաղուած էր. այն թողումք. ո՞ գիտէ, թերեւս իւրեանց վերջին շունչը Հայաստանի պայծառ եւ կենդանարար օգոյն մէջ փչելու ժամանակ յոյս մի եւս ունէին՝ թէ ինչպէս իւրեանց անմահական հոգւոյն աչքը յերանաւէտ կեանս պիտի բացուի, այսպէս եւս իւրեանց մարմինը այն քաջարեք երկրէն վերստին պիտի ծլի ծաղկի, եւ այն աւերակները դարձեալ պիտի կանգնին: Իսկ Հայաստանէն դուրս օտար եւ այլալեզու երկիրներ ցրուողները, ո՞հ, այն մխիթարութենէն եւս դուրկ էին: Արեան արտասուօք իւրեանց հայրենի քաղաքներէն ու գիւղերէն ելնելու ժամանակ «Տեառն է երկիր լրիւ իւրով» ասելով կմխիթարէին մէկ զմէկ. « ո՛ւր այլ երթամք՝ Հայ եմք, սիրելիք, կասէին իրարու, եւ ամեն տեղ ամէն ժամանակ Հայ մնալն մեր ձեռքն է: Զբա-

« Ժանուխմբ յիրերաց, չխառնուխմբ օ-  
 « տարաց հետ, չկորսընեմբ մեր լոյս  
 « հաւատը, չթողումբ մեր նախնեաց  
 « պերճախօս լեզուն, չհետեւիմբ օտար  
 « ազգաց անպատշաճ սովորութիւն-  
 « ներուն եւ ամեն տեղ մեղ համար  
 « Հայաստան կը դառնայ » : Այս ա-  
 սելով քահանայք եւ ժողովուրդք՝  
 ամէն բանէ առաջ կ'ժողովէին խաչերն  
 ու աւետարանները եւ եկեղեցական ու-  
 թիշ սպասները, եւ մինչեւ եկեղեցեաց  
 դռներն ու խաչքարերն իւրեանց հետ  
 կտանէին՝ իրրեւ իւրեանց ազգութեա-  
 նը սրբազան պահպանակներ. ձեռագիր  
 մատեանները իւրեանց դիրին առաժ-  
 կերթային իրրեւ իւրեանց նախնեաց  
 սիրտը, հողին եւ լեզուն, նոցա խօսքե-  
 րովը կմխիթարուէին իւրեանց նեղու-  
 թեանցը մէջ : Տեղափոխիկ թռչնոց բազ-  
 մութեան նման՝ երամ՝ երամ ելան գը-  
 նացին Տաճկաստան, Պարսկաստան, Ալը-

բաստան, Թաթարստան, Ռուսաստան,  
 Լեհաստան, Մաճառստան, Մոլտաւիա,  
 Իտալիա, Հոլանտա, եւ մինչեւ ի Հընդ-  
 կաստան. այլ աւա՛ղ, սրբոյն Եղիշէի  
 ասածին պէս, շատ ձմեռներ անցան,  
 շատ գարուններ եկան, շատ ծիծառներ՝  
 կռուներէն դարձան նորէն ի Հայաս-  
 տան, բայց Հայաստանի նժդեհ զաւակ-  
 ներն այլ եւս այնտեղ չերեւցան . . . :

Արդեօք գոնէ իւրեանց գնացած տե-  
 ղերն մնացի՞ն. արդեօք յիրաւի այն  
 տեղերն մի մի փոքրիկ Հայաստաններ  
 դարձուցի՞ն. արդեօք իւրեանց հայրե-  
 նի դաւանանքն եւ լեզուն այնտեղերն  
 եւս պահեցի՞ն: — Ո՛հ, գնա՛ խօսէ հե-  
 տերն, ս՛վ հայրենասէր ոգի . . . բայց՝  
 եթէ Տաճկաստան գնաս, հարցմունքդ  
 տաճկերէն արա քո Հայազգի եղբարցդ՝  
 որ կարենաս պատասխան ընդունել. ե-  
 թէ Ռուսաստան, ռուսերէն. եթէ Լե-  
 հաստան, լեհերէն. եթէ Հնդկաստան,

անգղիարէն . եթէ Մոլտաւիա, ուլահե-  
րէն . եթէ Մաճառստան, մաճառերէն .  
 . . : Իսկ եթէ դուն նոցա լեզուները  
չես հասկանար, դարձիւր տրտում տը-  
խուր՝ նոյն երկիրներուն հին եւ հոյա-  
կապ եկեղեցեաց գաւիթներուն մէջ՝  
ոտքիդ տակը շարուած մարմարիոնէ  
տապաններուն հարցուր, նոցա լեզուն  
անշուշտ կհասկանաս . վասն զի Հայե-  
րէն է . ԱՅՈՒ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՐՈՆ  
( այս անուն ) . . . . :

Ի այց ի՞նչ է պատճառն որ այս Հայ  
գաղթականներն իւրեանց ազգութիւ-  
նը կորուսել են : Միթէ միայն օտարագ-  
րաց հետ կամաւորապէս եւ բնական  
կերպով բարեկամանալն եւ նոցա յա-  
րիլն : Այ՛ այլ գլխաւոր պատճառ է այս  
բանիս, մանաւանդ Վեհաստանի ու Մա-  
ճառստանի մէջ — ուր Հայոց ազգու-  
թիւնը աւելի կորուսած է — իւրեանց  
մայրենի գաւանանքէն ետ կենալն ու



Կաթնի զաւստան: Ապացոյց, ահա նոյն  
 իսկ Ահաաստանի Հայոցմէ: Միայն Սու-  
 չաւայ քաղաքին Հայերը իւրեանց ազ-  
 գութիւնն անկորուստ պահել են: Վասն  
 զի լուսաւորչական մնացել են. իսկ ու-  
 րիշները առհասարակ կաթոլիկ, ուստի  
 եւ ազգակորոյս եղել են:

Այս բանս ազգասէր եւ ողջամիտ  
 մարդու համար շատ ցաւալի խեղճու-  
 թիւն լինելուն տարակոյս չկայ. բայց  
 թերեւս նորա ցաւը պակաս լինէր՝ եթէ  
 մտածէր՝ թէ « ուրիշի հաւատքին խառ-  
 նուել պէտք չէ. մերայինք եւս կաթո-  
 լիկ ուղել են լինել, եղել են »: Եկ տե՛ս  
 որ այնպէս չէ, այլ Ահաաստանի Հայերն  
 մեծամեծ եւ դառն հալածանօք եղել  
 են կաթոլիկ՝ երկու հարիւր յիսուն տա-  
 րի առաջ: Մաճառստանի եւ ուրիշ տե-  
 ղերու Հայերէն եւս շատ մարդիկ նոցա  
 օրինակին հետեւելով՝ կորսուել են ազ-

գին համար, եւ թէ ինչպէս, համառօտ  
սլատմեմք:

Բ.

Աստուած իւր ողորմութիւնը ամբողջ  
ազգի մի վերայ տարածած ժամանակ-  
ները՝ կհանէ նորա մէջ աշխարհա-  
շէն եւ առաքելաշնորհ մարդիկ, ինչ-  
պէս մեր մէջ Սահակներ, Մեսրոպներ,  
Վարդաններ, Վահաններ, Ներսէսներ,  
Խորենացիներ, Լամբրոնացիներ, որ ազ-  
գին հոգին կարթընցնեն ու կընորոգեն,  
Նոյնպէս իւր արդար բարկութեան ժա-  
մանակներն աշխարհակործան ու վնա-  
սակար մարդկանց ձեռքը կը մատնէ  
ազգը կամ ազգին մի մասը, ինչպէս ե-  
ղած են Մերուժաններ, Վասակներ,  
Պաղոնցներ, Բարսեղներ, Քռնեցիներ,  
Ապարանցիներ . . . :

Շատ կը սխալի այն մարդն որ անկողմ-  
նասէր հոգւով կուզէ կարգալ ու հաս-

կանալ ո՞ր եւ իցէ պատմութիւն, եթէ  
 առաջուց դրած լինի միտքը թէ ազգիս  
 մէջ այնպիսի ատելի յիշատակ ձգող  
 մարդկանց ամենուն եւս դիտաւորու-  
 թիւնը զուրկ եւ հեռու էր յամենայն  
 ազգասիրութենէ, եւ թէ նոքա ամենքն  
 եւս անպարտաւ ազգին վնասը կուզէին՝  
 երբ օտար ազգաց ձեռքը կըմատնէին  
 զինքը, երբ լաւերուն միարանութենէն  
 կբաժնուէին ու չարերուն գլուխ կը  
 կենային, ինչպէս Վասակ Միւնի. երբ  
 իւրեանց թագաւորէն գլուխ կքաշէին  
 եւ օտար զօրքով իւրեանց հայրենեացը  
 վերայ կը վազէին, ինչպէս Մերուժան  
 Արծրունի. երբ ազգին ուղիղ հաւատ-  
 քին մէջ հարիւրաւոր մոլորութիւններ  
 գտած կկարծէին, ինչպէս Ներսէս Պա-  
 ղոնց՝ չեպիսկոպոսն Արմեայ. երբ ազգիս  
 Հայոց թշնամի հանդիսանալն իւրեանց  
 համար դիւական պարծանք կհամարէ-  
 ին, ինչպէս Վ. Բարսեղը. երբ օտարաց

նաեւ վատ բաներն իւրեանց ազգին լաւ  
 յատկութիւններէն անգամ վեր կգը-  
 նէին, ինչպէս Քռնեցին եւ Ասպարանցին  
 եւ ուրիշներ: Եւ սակայն, եթէ ճշմարիտ  
 է այն առածն որ գալրոցական փիլիսո-  
 փայութեան մէջ իբրեւ կանոն ընդու-  
 նուած է, այս ինքն թէ «բարին առ-  
 եալ լինի յամբողջ պատճառէ, իսկչարն  
 յոր եւ իցէ պակասութենէ», հարկ կը  
 լինի խոստովանիլ՝ թէ վերոյիշեալ վա-  
 տանուն անձինքը որքան եւս ջանացուի  
 անմեղադիր անել՝ ըստ իմիք գովելի  
 դիտաւորութիւններ ընծայելով նոցա,  
 — որպէս թէ ոչ միայն իւրեանց անձ-  
 նական շահուն եւ սնտոի փառամոլու-  
 թեանը համար ձեռք զարկել են այն-  
 պիսի ազգալինաս գործոց, այլ եւ ազ-  
 գին քաղաքական կամ կրօնական օ-  
 գուտ մի անելու մտքով, — սակայն ա-  
 նաչառ պատմութեան առաջը ոչ եր-  
 բէք կրնան արդարանալ, եւ նոցա յա-

ջորդներն եւ ազգին ապագայ սերունդ-  
ները միշտ իրաւունք պիտի ունենան  
զղուանօք եւ արհամարհանօք բերան  
առնելու այնպիսի ազգակործան ան-  
ձանց անուններն:

Ահա այս վերջիններուս կարգը ան-  
ցած է իւր անարժան գործերովը Լե-  
հաստանի Իլլիով քաղաքին առաջնորդը  
Նիկոլ, որ եւ կասուի Նիկոլայոս, եւ ըստ  
Լեհացւոց հնչմանը՝ Մի+սլայ - Թօչսոսե-ի:  
Բայց մեք սորա գործոց պատմութիւնն  
անելէն առաջ՝ Լեհաստանի Հայոց ծա-  
գումը պատմեմք համառօտիւ:

Գ.

Պարսից Ալիասլան թագաւորը Անի  
քաղաքը պաշարել էր մէկ կողմէն եւ  
առնելու մօտ էր 1062ին: Խեղճ բնա-  
կիչները յուսահատութեան մէջ ընկած՝  
միւս կողմէն ելան՝ յիտուն՝ հազար հո-

դի, եւ Տրապիզոնի ու Վրաստանի ճա-  
նապարհովը ցրուելով՝ գնացին մինչեւ  
Աժտերխանի կողմերը, անտի կիսով չափ  
ի Խրիմ՝ եւ կիսով չափ ի Ղեհաստան:  
Սոցա օրինակին հետեւելով՝ թէ դար-  
ձեալ Անիէն եւ թէ Հայաստանի ուրիշ  
կողմերէն այլ եւ այլ ժամանակ հարիւր  
յիսուն հազարէն աւելի Հայք նորէն  
ցրուեցան Եւրոպայի զանազան կողմերն,  
ինչպէս որ յայտնի է ազգիս պատմու-  
թենէն:

Անիէն Թաթարստանի վերայէն ըստ  
մասին Խրիմ անցնելով, եւ ըստ մասին  
ի Մոլտաւիա՝ եւ անտի Ղեհաստան գը-  
նացող Հայերն գլխաւորապէս Կալիցիա,  
Փոտոլիա ու Վոլինիա նահանգներուն  
զանազան քաղաքներն ու գեղերն բնա-  
կեցան, ինչպէս Եազլովցա, Զվանեց  
կամ Զուանչա, Կամենից, Ստանիսլաւ,  
Սնեաթին, Պժեժան, Հոռոտենքա, Զա-  
մոսց, Գութեր, եւլն. բայց իսկզբան բը-

նակեցան մեծ բազմութեամբ Կալիցիոյ մայրաքաղաքին այս ինքն Իլլովի<sup>(1)</sup> մօտերն իբրեւ զատ արուարձանի մէջ, որպէս զի օտարազգի բնակիչներուն հետ չխառնուին: Իսկ երբ սկսան Լեհացւոց լեղուն հասկանալ, եւ հարստութեամբ, վաճառականութեամբ եւ պէսպէս քաղաքական եւ զինուորական պաշտօններով յառաջանալ, մտան նաեւ բուն քաղաքն, եւ այնտեղ երեք փոքրիկ եկեղեցիներ շինեցին, որ այժմ քանդուած են: 1183 ին կանգնեցին փայտաշէն եկեղեցի մի, եւ երկու հարիւր տարիի չափ յետոյ, այս ինքն 1363 ին շինեցին այն հոյակապ քարաշէն եկեղեցին՝ որ կեցած է մինչեւ ցայժմ, բայց կեցած է՝ ոչ իբրեւ ազգային տաճար, այլ

---

(1) Իլլով անուան բուն Լեհերէնն է Լիւլ (Լեոնի քաղաք)՝ Լատիներէն Լեուուիո, Գերմանացեալ ձևով Լե'ուդել:

խրբել փառաւոր շէնէ՛ Հայկական ազ-  
գութեան. փան զի միայն անունով մը-  
նացած է Հայոց եկեղեցի՝ իսկ մէջը Վա-  
տին եկեղեցւոյ դաւանանքն կալաշտուի՝  
լատինական արարողութիւններով, թէ-  
պէտ եւ Հայերէն լեզուով՝ զոր ժողո-  
վուրդը ամենեւին չհասկանար, եւ ա-  
նով ժամ պատարագ անող եկեղե-  
ցականներն եւս հաղիւ թէ կլմա-  
նան:

Ղազար Զահեցին կաւանդէ մեզ՝ թէ  
Վեհաօտան գնացող Անեցիներն քառ-  
սուն հազար քուն էին. այս թիւս չափա-  
զանց եւս երեւնայ, յայտնի է որ նոքա  
հարիւր հազար հոգիէն աւելի էին՝ պա-  
կաս չէին. իսկ այժմ եօթը կամ ութը հա-  
զար հոգի հաղիւ կգտնուի՝ իւր Հայոց  
ազգի սերունդ լինելը գիտցող կամ խոս-  
տովանող:

Շատ հետաքրքրական բան է այն ե-  
կեղեցւոյն շինութեան ժամանակը մա-



դադարի վերայ գրուած յիշատակա-  
րանը որ է այս:

« Յիսուս Քրիստոս .

« Այս մեր կամաց եւ հաւատոյ գիր  
« է, Յակոբիս որդւոյ Շահնշահին՝ բնա-  
« կան Ասիացի, եւ Փանոսի որդւոյ Ավ-  
« բանի՝ բնական Աղաղցի, որ տուաք  
« զայս հաւատոյ գիրս, որ ու խտեցաք վա-  
« սըն սուրբ Աստուածածնին, եւ շինեցաք  
« ի Առի քաղաքս, Հայաստանն սուրբ Լուս-  
« սասուրչին ասրինսփն, հնազանդ կաթնուլիկե-  
« ին, եւ Հայ Եպիսկոպոսի, եւ հայ արանսարան-  
« ցըն, որ յայսմ հետէ ոչ մեր որդի, ոչ  
« գուստր, ոչ եղբայր, ոչ ազգ, ոչ թոռն,  
« զարդ՝ զողորմութիւնն որ առնեն, այլ  
« իշխանութիւնն չառնեն ի վերայ եկե-  
« ղեցւոյն կամ քահանայի կամ տանու-  
« տրաց կամ ի վերայ եկեղեցւոյ ընչից:  
« Ոյ որ յանդգնի կամ լրբութիւն առ-  
« նէ, նա սուտ է յամենայն դատաստան,  
« եւ պատժի յԱստուծոյ եւ ի սուրբ ե-

« կեղեցւոյ » եւ ի սուրբ Աստուածածնէն  
 « եւ ի սուրբ առաքելոցն, վկայութեամբ  
 « Աստուծոյ եւ տանուարաց: Իրեցաւ գի-  
 « րըս ի թիվ. ՊԺԲ ( 1363 ) յաւգաւստոսի  
 « երեսուն աւրն: Ես Աբրահամ ալազե-  
 « րեցս վկ. » եւլն: — Այս խօսքերս գրող-  
 ներուն մտքէն եթէ անցել եր' թէ ժա-  
 մանակ պիտի գայ, որ Հայաստանն սուրբ  
 Լուսինայի օրինաց հետքն անգամ պի-  
 տի չմնայ այն եկեղեցւոյն մէջ, եւ ե-  
 պիտկոպոսն եւ տանուտէրերը՝ այս ինքն  
 ժողովրդեան գլխաւորները՝ այլ իշխան-  
 նութեան ձեռք պիտի մատնեն իրենց ե-  
 կեղեցին եւ ազգութիւնը, անշուշտ  
 մարգարէական հոգի պիտի ունենային  
 որ գուշակէին՝ թէ երեք հարիւր տա-  
 րիի չափ սուրբ էջմիածնայ կաթողիկէին  
 հնազանդ մնալէն յետոյ՝ Հայ անուան  
 անարժան եպիսկոպոսի ձեռքով՝ պա-  
 պական իշխանութեան գերի պիտի լինի այն  
 հոյակապ եկեղեցին՝ իւր քահանաներո-

վր, տանուտէրերովը, ժողովրդովն եւ  
ամենայն հարստութեամբն ու զարդա-  
քանքներովն, ինչպէս որ պիտի պատ-  
մեմք:

Վեհաստան գնացող Հայոց լեզուն Ա-  
նեցւոց բարբառն էր, որոյ հետքը մին-  
չեւ ցայժմ մնացած է թէ՛ այն կողմե-  
րըն, թէ՛ Մաճառստանի եւ թէ՛ Խրիմու  
եւ Նախիջեւանի Հայերուն մէջ. բայց  
Թաթարստանի Ախսարայ քաղաքէն եւ  
մօտաւոր տեղերէն 1318 - էն յետոյ Խը-  
րիմ եւ Վեհաստան եկող Հայերն՝ Թա-  
թարաց լեզուին գրեթէ այն կերպով  
վարժ էին, ինչպէս որ այժմու Փոքր  
Ասիացիք, Րումելիցիք, Մուտալիացիք  
եւ Պեսարապիացիք՝ տաճկերէնի. այս  
պատճառաւ իւրեանց աւելի զիւրին եւ  
ընտանի երեւցած է այն լեհերէնով՝  
հայերէնով ու թաթարերէնով խառն  
Չաղախայի կամ Բոն Թոնրի լեզուն՝ քան  
թէ պարզ հայերէնը, որ նոյնպէս խառն

էր Թաթարի ու Աեհի բառերով: Օրինակի համար, առաջ դնեմք այստեղ քանի մի կտոր խօսք՝ Աեհաստանի Հայոց այն լեզուէն՝ որով կխօսէին եւ կըզրէին, գէթ նաքա որ հայերէնը իբրեւ ազգային լեզու՝ պատուաւոր կհամարէին, եւ գրոց լեզուին աւելի տեղեկութիւն ունեցողները սորա մէջ գրաբառ խօսքեր եւ ոճեր կխառնէին:

Իլլովի առաջնորդ Խաչատուր եպիսկոպոսը 1467 թուականին խոստմնագիր մի տուած ունի Իլլովի ժողովրդեան, որոյ կէս գրաբառ լեզուն եւ պատմական նշանակութիւնը գիտելու արժանի բան է եւ է այս:

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Խաչատուր Արքեպիսկոպոս:

«Ի թուականութեանս ԶԺԶ (1467):

«Ի ժամանակս երիցս երանեալ Հայրապետի հանուրց Հայաստանաց Տեառն  
«Յառխտագէս Աաթուղիկոսի, եւ Պատ-

« րիարքի վաղարշապատու սուրբ յԱթո-  
 « ւրն էջմիածնի նուաստս ի բանայսիրաց  
 « Խաչատուր Եպիսկոպոսս ձեռնադրեցայ  
 « Եպիսկոպոս Ելովի աթոռոյն եւ իւր վի-  
 « ճակացն, եւ ողորմութեամբն աստուծոյ  
 « եկեալ հասար ի մեր հաւտս որ Աս-  
 « տուծոյ եւ ի մեր հայրապետէն անձնե-  
 « ցաւ մեզ : Եւ ի սոյն աւուրս շնորհաւք  
 « Փրկչին եկեալ հասեալ կային սուրբ եւ  
 « պարծանաց պարծանք Նւիրակքն Տէր  
 « Անանիաս արհի Եպիսկոպոսն եւ Տէր  
 « Թումար Եպիսկոպոսն ի աստուածաշէն  
 « եւ տիրախնամ քաղաքս Ելովս. եւ հան-  
 « դէսիւ ժողովեցան միայգումար ամե-  
 « նայն աւրհնութեանց արժանաւ որ եր-  
 « ջանիկ եւ ուղղափառ ժողովուրդ քա-  
 « ղաքիս ի գաւիթս աստուածային լուսոյ  
 « մաւրս ի մենաստանիս, որ է ընդդէմ  
 « քաղաքիս. խնդիրք արարին զայսքան  
 « բանքս : Եւ ես նուաստ Եպիսկոպոսս  
 « Խաչատուր խոստացայ կատարել առաջի

« Աստուծոյ՝ Նախ՝ եկեղեցեաց եւ ընչիցն  
 « Հրաման չայնենք՝ առանց տանուտէրաց  
 « Հրամանին: Բ, որ քահանայից մտոցն  
 « ձեռնամուխ չի լինիմք՝ եւ ոչ նորա իմ  
 « մուտքաց, որպէս առաջի հայրապետըն  
 « ժամն էր: Գ, որ զայս տեղացս իրիցա-  
 « նուն զգատն ու զգատաստանն ի տեղս  
 « այնենք հետ տանուտրացն եւ այլ տեղ  
 « չի ձենենք: Դ, որ զքահանայ կամ ըզ-  
 « սարկաւարգ առանց տանուտրաց հրա-  
 « մանին չի այնենք: Եւ որ անհասուկ խը-  
 « նամութիւն կամ այլ անհաս բան կա-  
 « շառաւք չի այնենք: Այլ թէ մահու թէ  
 « կենաց ինչ որ իւրեանց կարեացն հոգոյ  
 « բաժին հանեն, կամ տան՝ զայն առ-  
 « նունք՝ եւ այլ աւելի չի պահանձենք:  
 « Այլ եւ եկեղեցապան եւ հայրպետ դը-  
 « նելոյ հրամանք չանենք առանց տանու-  
 « տրացն հրամանին: Եւ այլ ինչ բան որ  
 « լինայ կամ դատաստան հոգեւոր կամ  
 « մարմնաւոր, առանց տանուտրացն չայ-

« Ինչո՞ւ: Եւ այլ թէ Կաթուղիկոսն Տէր  
 « Առխտագէտն վերստին հրաման այնէ  
 « եւ զլոյ՛ քաղաքս տէրունի այնէ գրով,  
 « ես պատասխան տամ Կաթուղիկոսին  
 « Աստուծով » :

Ասկից աւելի հասարակ լեզուով է  
 Լիւպոմիրսքի իշխանին Ռաշքովի Հայ-  
 ոց տուած հրովարտակը, որ այս է:

« Յովսէփ Լիւպոմիրսքի Ռաշքովայ  
 « Ժառանգապէկ, եւ այլ:

« Յանուն Աստուծոյ, ամէն. եւ վասն  
 « ապագայ յաւիտենական յիշատակի: Ա-  
 « մենեցունց առ հասարակ եւ առանձին  
 « գիտութիւն լիցի ներկայ Քրիստոսի ( 1 )  
 « իմոյ նամակաւն:

« Արովհետեւ ամենայն քաղաքացն  
 « պայծառաշինութիւն լինի, աւելցնելով  
 « զբնակիչս նորին, եւ զժողովուրդս, ես  
 « ալ փափաքելով զշինութիւն եւ զպայ-

(1) Արտօճութեան

« Տառութիւն իմ ժառանգաւոր քաղա-  
 « քիս Ռաշքօւայ, աւելնալով ամէն ցեղ  
 « ժողովրդովն, եւ մանաւանդ ազգաւն  
 « Հայոց պաղիրկանաց, վասն այնորիկ այս  
 « Հայազգ ժողովրդեան կուտամ զիմ Նը-  
 « րաւան <sup>1</sup> ), որն որ իմ բրաւայովն սիրա  
 « եւ միտքն իւրեանց հաստատվի գալ  
 « ի Ռաշքօւին, տան շինութիւն եւ պաղիր-  
 « կանութիւնն անեն, տինձ եւ համար-  
 « ձակ բնակելով: Աւ պարնական իմ խօս-  
 « քով խոստանամ վերոյիշեալ Հայոց ազ-  
 « գիս, թէ զամենայն արդիքուներն <sup>2</sup> )  
 « եւ բունքթաներն <sup>3</sup> ) ներքոյգրեալ բը-  
 « րաւայիս բէռնել եւ պահել՝ պարտա-  
 « կան եմ յամենայն ժամ, եւ յաւիտ-  
 « եանս: Նմանապէս եւ իմ հետեւօղքն՝  
 « Ռաշքօւայ ժառանգապէկք պարտա-  
 « կան պիլան <sup>4</sup> ) խօսքս բռնել, եւ պահել

(1) Իրաւունք: 2) Յօդուած: 3) Հաստուած,  
 կէտ: 4) Պիտի լինին:



« Հայազգիս եւ իւրեանց հետեւողացն  
 « յաւիտեանս : Իրաւանուն կապուած-  
 « քին դօրա, եւ բրաւային արդիքուներն  
 « եւ բունքթաներն են այսոքիկ » :

« Ա. Տամ Ռաշքօւայ Հայ ազգին իշ-  
 « խանութիւն՝ որ ունենան զկատարեալ  
 « իւրեանց ուրէնտն <sup>1</sup> ), այս ինքն Վ. օյթ <sup>2</sup> )  
 « տասլերկու աղայովն, եւ քառասուն  
 « աղբարանցմովն, եւ այլ ամենայն քա-  
 « ղաքաց երկայովն <sup>3</sup> ) : Եւ այս Հայ ազ-  
 « գիս ամենեցունց միաբան հաւանու-  
 « թիւնովն ամէն նոր տարի էլէքցիայի <sup>4</sup> )  
 « ընտրած եւ երգվընցած վօյթին ձեռն  
 « կուտամ զօրութիւն իւրիստիքցիային <sup>5</sup> ),  
 « զի ժ. Բ. Աղանուն, այս ինքն երգվընցած  
 « դատաւորացն հետ միատեղ նստելով,  
 « զամենայն իւրեանց ազգի մէջ բօղօշ-

(1) Վառաւարութիւն, վարչութիւն : 2) Տա-  
 նուտէր, քաղաքագլուխ : 3) Վարդ, սովորութիւն :  
 4) Ընտրութիւն : 5) Իրաւասութիւն :

«նիյ <sup>1)</sup> եւ քրիմինալնի <sup>2)</sup> շարիաթնուն  
 «դատաստանն կըտրէ, եւ վճռէ տէքրէ-  
 «թուլն, եւ զայսպիսի տէքրէթներն պի  
 «գրէ բիսարն <sup>3)</sup> իւրեանց Աքթանուն <sup>4)</sup>  
 «Բրօթօքուլի <sup>5)</sup> մէջ:

«Բ. Սալդ <sup>6)</sup> մէկ Աբբէլացիան <sup>7)</sup> իւ-  
 «րեանց Տէքրէգէն պատկանի առ իմ,  
 «կամ իմոյ վէգիլին դատաստան: Եւ  
 «զայսպիսի արբէլացիանուն տէքրէթ-  
 «ներն իմ կամ իմոյ վէգիլին ձեռօքն ըս-  
 «տորագրեալս պարտի Հայոց բիսարն գը-  
 «րել իւրեանց արթանու մէջ, արթօ-  
 «րին <sup>8)</sup> եւ բօզվանին <sup>9)</sup> հաստատու-  
 «թեան համար:

«Գ. Եւ այս Ուրենտին համար նշա-  
 «նեմ պաշխայ դատաստանատուն Ռա-

---

(1) Հասարակ, 2) Գրեական, 3) Գրագիր,  
 4) Արձանագրութիւն, 5) Յիշատակարան, 6)  
 Աիայն, 7) Բողոք, 8) Խնդրատու, 9) Պատաս-  
 խանատու:

« Թուշին <sup>1)</sup> մէջ, ուրուխ <sup>2)</sup> զիւրեանց  
 « դատաստան, եւ զամենայն երկայն սա-  
 « նին <sup>3)</sup> » :

« Գ. Այս Հայ ազգս լիցի մասնակից  
 « ամենայն կէլուրից քաղքին, սարապար  
 « Լեհ ազգին հետ. այնու համար պիտի  
 « ընտրեն իւրեանց միջէն խելօք վերակա-  
 « ցու ամէն նոր տարի երդալընցած, որ  
 « զայնպիսի կելուրն ժողովէ եւ խարձէ  
 « ըստ կամաց իւրեանց ուրէնտին, եւ  
 « այլն \* ) :

Եւ թէպէտ այս աւեր լեզուն աւելի  
 եւս աւրուել է հետզհետէ, բայց մինչեւ

(1) Խորհրդարան, 2) Ուր, որ տու, 3) Պիտի  
 անեն.

(\*) Ամբողջ հրովարտակը և սահմանադրու-  
 թիւնը կարող են տեսնել ցանկացողք Բժշկեան  
 Մինաս Վարդապետին « Ճանապարհորդութիւն  
 ի Լեհաստան », անունով գրքին մէջ, երես 167

ցայժմ սորա նման լեզուով կխօսին այն  
 Հայերն որ Աեհաստանի ու Մաճառըս-  
 տանի մէջ գտնէ իրենց ազգութեան ա-  
 նանը անկորուստ պահել են: Սակայն  
 դարմանալին այս է որ վեշտասաներորդ  
 ու եօթնեւտասներորդ դարերուն մէջ  
 թաթարերէն խօսիլն ու գրելը կհամար-  
 ուէր նոցա մէջ իբրեւ ընդունելի սո-  
 վորութիւն, եւ այն լեզուն հայերէնէն  
 աւելի ռամիկներուն գիւրիմաց: Եւ ո-  
 րովհետեւ այս թաթարերէնի գործա-  
 ծութիւնը 1500 թուականէն յետոյ  
 կերեւնայ գրուածոց մէջ, կարծիք կայ  
 թէ այն ժամանակները թաթարստանէն  
 նոր գաղթականութիւն մի եւս եկած է  
 Աեհաստան, որոյ սովորական լեզուն  
 թաթարերէն է եղած: Օրինակի համար  
 դնեմք այստեղ Գրօրէնէ մի օրինակ, այս  
 ինքն հարսանեաց յիշատակարան, որ  
 Նիկօլ եպիսկոպոսին կնքովը կնքուած  
 եւ ուրիշ եկեղեցականաց ու դատաւո-

րաց յիկայութեամբը հաստատուած է.  
 « Քրոնոս-նոս- Բաննա ւաննանընկ ուղտի-  
 « լը ճանլը պարսն Պիլեի-լիլ Վ ւասո Խդնընկ,  
 « որս պարսն Իււրոսիլիլ Բանիլիւսոսնոնկ :  
 « Պօլպոս- Իււլոս, 22 sep. 1629 ունաս,  
 « Նէիլիլ Ժալէնասընայ Ժոս, Բասըւահլըիլըն-  
 « որս ուղտնիլ Օլիլոսնոնկ' պիլիլ Ժի-  
 « լոսըիլը պիլիլընկ, ասո Ժիլիլընայ Ժիլ  
 « Օւասըիլանընկ, Էրեցիլիլընայ պարսն  
 « Օւասըիլ օլլոս- Պիլիլընկ Բան Թոսոսոնկ :  
 Այս ինքն, « Գրօրէնք տիկնոջ Աննայի  
 « դատեր պարոն Վասլի Փիլիպպոսեան,  
 « եւ պարոն Գրիգորի Յովհաննէսեան :  
 « Եղեւ յիլլոլ ի 22 Սեպտեմբերի 1629  
 « ամի ըստ տոմարին Գերմանացւոց, ի  
 « Թագաւորութեան Սիգիսմունտայ եր-  
 « րորդի՝ բարեգութ տեառն մերոյ, յա-  
 « լագերիցութեան տեառն Չաքարիայ,  
 « յերեցիոխանութեան պարոն Թորոսի  
 « Պերնաթոլից Չատիկեան : »

Նոյն 1500 - էն մինչեւ 1650ի ժամանակները Հայերէնէ թաթարերէնի թարգմանուած կերեւին նաեւ մեր մէկ քանի եկեղեցական գրքերն ու ժամերգութեան աղօթքները, յորոց օրինակի համար մէջ բերեմք Նորաստեղծեալ երգին առաջին տան թարգմանութիւնը առ առ, որպէս զի բնագրին խօսքերուն հետ բաղգատելը դիւրին լինի բանասիրաց:

« Լճանի ետարդը ոսկւ - Բանկրեննի  
հիշլիտում

Աւալ Գօգն - Գօգնանի

Տա Գօգումի շերտ-վարընը Բեննի

Անլուր-ն Ֆրեշտաւրընը

Տա «եղիտի ելեհնդաւրընը Կերդում

Խարնելիտա՝ ոսկան պերարդընը \*)

---

(\*) Մի-բանի, ածականը սխալ հասկացած ու բայի տեղ առած կերեւի թարգմանիչն՝ որ ղերտընը (ղերեթի) թարգմանել է իրը թէ

Խայտելաբը - պիլա փայտա հայտաբլանը յըր

Երբորբո-նի-ն այրովա-ը: »

( Նորաստեղծեալ բանն յանէից

Իսկզբաննէ զերկինս երկնից .

Եւ զերկնային զօրս անմարմնոց

Իմանալեացրն զուարթնոց

Եւ զգալի տարերց քառից

Հակառակաց միաբանից ,

Որով յաւէտ փառաբանի

Երբորզութիւնն անճառելի: )

Լեզուն այս կերպով կորսընելով, մինչ-  
դեռ հարուստներն ու մեծերը աւելի  
Լեհերէն կխօսէին, եւ հասարակ ժո-  
ղովուրդը Թաթարերէն, հարկ է եղած  
որ դաւանանքնին եւս կորսընեն: Լե-  
զուին կորսուելը այն Հայերուն ազգու-  
թեանը մահացու ծանր հիւանդութեան

---

Միաբանեաց, միաբանեց, — Սորա նման սխալներ  
և անճշգուծիւններ միւս խօսքերուն մէջ եւս  
կերևին, և զարմամք չէ:

մէջ ընկնելուն նշան էր. իսկ դաւա-  
նանքը կորսընելով՝ հոգին սլիտի փչէր:  
Այս ցաւալի հոգեււարքը երկար քշեց,  
եւ հոգիառ աղգասպանն եղաւ Նիկող  
անարժան եպիսկոպոսը հետագայ կեր-  
պով:

## Դ.

Այն ժամանակները, այս ինքն ժէ  
դարուն սկիզբները, Պարսից Շահաբաս  
թագաւորը դեռ նոր քշել էր Հին Զու-  
ղայի բնակիչներն յԱսպահան, եւ Արա-  
րատեան նահանգը ոտնակոխ լինելով  
Պարսից եւ Օսմանցւոց զօրքերուն, սուրբ  
էջմիածնայ Աթոռն եւս մեծ նեղութեան  
եւ սաստիկ տառապանաց մէջ կգրտ-  
նուէր: Այն տառապանաց մի պատճառն  
եւս էր Դաւիթ եւ Մելքիսէթ Վաթու-  
ղիկոսներուն նիւթական եւ բարոյական  
խեղճութիւնն, որով կաթուղիկոսական



իշխանութիւնն իրարու ձեռքէ քաշքը-  
 շելու պէս վարուելով, եւ երկուքն եւս  
 իւրեանց փառասէր կամ շահասէր դի-  
 տաւորութեանցը հասնիլ չկարենալով,  
 սուրբ Աթոռը ծանր պարտքերու տակ  
 ձգեցին: Վասն զի Պարսից շահը տարին  
 հարիւր թուաման ( այս ինքն հարիւր ոս-  
 կի ) տուգանք դրած էր Մելքիսէթ կա-  
 թուղիկոսին վերայ՝ երեք յանցանքի  
 համար, ինչպէս որ կգրէ ականատես  
 պատմիչն Առաքել. « Նախ՝ վասն նշխա-  
 « րաց սրբուհւոյ կուսին շուրիսիմեայ,  
 « որ թոյլ տալովն Մելքիսէթի՝ տարան  
 « ֆռանկներն. զոր Բաղդադ ասէին ( ի  
 « հարկէ Հայք ) թէ վասն կաշառացն  
 « թոյլ ետ: Երկրորդ՝ վասն դառնալոյն  
 « ի մեծ սուրգունէն ( արսորանքէն ),  
 « որ առանց հրամանաց շահին դարձաւ  
 « . . . : Երրորդ՝ յորժամ շահն ընկէց  
 « ի կաթուղիկոսութենէ զՄելքիսէթն  
 « եւ առաքեաց յԱսպահան, համարէր

« շահն զնա՝ թէ ի կալանս կայ, բայց  
 « Մեկքիսէթն յընդարձակի կալով վա-  
 « րէր զիշխանութիւն կաթուղիկոսու-  
 « թեանն, եւ այն եւս առանց հրամա-  
 « նաց շահին: Ասան այսքան յանցա-  
 « նացս կալեալ էր շահն զՄեկքիսէթն եւ  
 « կամէր սպանանել. իսկ վասն բարե-  
 « խօսութեան Ամիրգունայ խանին (Ե-  
 « րեւանայ) ներեաց եւ ոչ սպան, բայց  
 « պահանջէր զերիս հարիւր թուման  
 « տուգանս. վասն որոյ ի կապանս եր-  
 « կաթիս պահէր ի կալանի, զի զայն վը-  
 « ճարեսցէ, եւ գնացեալ դադարեցի  
 « ուրեք լռեալ յիշխանութենէ կաթու-  
 « ղիկոսութեանն»: Աերջապէս այսքան  
 միայն զիջողութիւն արաւ Շահարաս՝  
 որ Մեկքիսէթ վճարէ տարին հարիւր  
 ոսկի, որ այն ժամանակի խեղճութեանց  
 նայելով մեծ փող էր, եւ նա Էջմիած-  
 նայ Աթոռոյն վերայ ծանրացոյց այն  
 տարեկան տուրքը: Միանգամայն որ

եւ իցէ հնարքով, շատ անգամ նաեւ սոսկալի անիրաւութեամբ ու չարաչար դրկողութեամբ ամէն տեղ կալտրաէր՝ գեղեր ու քաղաքներ, ամենէն փող կը պահանջէր եւ կառնուր՝ եկեղեցականներէն ու աշխարհականներէն, եւ դարձեալ չէր կրնար պարտքէն ազատիլ եւ սուրբ Աթոռն ազատել. ուստի մէկէն միւսէն ծանր տոկոսեօք փոխ ստակ կառնուր, որով քանի գնաց՝ պարտքը պակասելու տեղ աւելացաւ:

Տեսաւ Մելքիսէթ որ իւր բռնածը չեղնելիք ճանապարհ է, հրաժարեցաւ կաթուղիկոսութենէն՝ պատճառ բերելով իւր ծերութիւնն եւ պէսպէս տրկարութիւնները, տեղը կաթուղիկոս օժեց եւ հրատարակեց իւր եղբօրսրդին՝ Սահակ եպիսկոպոսը՝ Ամիրգունայ խանին հաւանութեամբը, եւ ինքը օր մի իրիկուան գէմ՝ հետը մէկ սպասաւոր առած, իբր թէ Նրեւան երթալու մըտ-

քով՝ ճանապարհ ելաւ Եջմիածնէն, եւ  
կէս ճանապարհը հասած չհասած՝ դար-  
ձուց ձիուն գլուխը դէպ ի Օսմանցւոց  
սահմանագլուխը, գնաց Կաղզուան,  
անտի Կարին, անտի Կոստանդնուպօլիս:

Կասէ Առաքել պատմիչը թէ «Անդ  
«եւս ոչ ընկալան զնա ժողովուրդք եւ  
«վարդապետք քաղաքին ևս» Երէ+ Ինչ  
«պատճառի»: Եւ թէպէտ նա պատճառն  
այսպէս անյայտ եւ անորոշ կ'թողու,  
բայց դիւրին է ընդհանրապէս այսքա-  
նը մակարերել՝ թէ նախ՝ Պօլսեցիք չէին  
կարող չգիտնալ Մելքիսէթի մինչեւ այն  
ժամանակը ունեցած վարմունքը Գա-  
ւիթ կաթուղիկոսին եւ ուրիշներուն  
հետ. երկրորդ՝ իմացած էին անշուշտ  
նորա ահագին պարտքի տակ ձգած լի-  
նելն զսուրբ Աթոռը, եւ երրորդ՝ ար-  
դէն կաթուղիկոսութենէ հրաժարած  
լինելով՝ դարձեալ կաթուղիկոսական  
պատուով ընդունուիլ կամենալը:

Լսած էր Մելքիսէթ Լեհաստանի Հա-  
 յերուն այն ժամանակները հարուստ եւ  
 ծաղկած՝ հանգիստ վիճակի մէջ գրու-  
 նուիրը. ուստի առանց ուշանալու ի  
 Պօլիս՝ ելաւ զնաց Իլվով 1626 ին : « Եւ  
 « ժողովուրդք քաղաքին Իլովայ ընկա-  
 « լան զնա. յոյժ պատուով եւ մեծաւ  
 « փառօք » կասէ պատմագիրը. պատճա-  
 ուր յայտնի է : Առաջինը այս՝ որ ինչպէս  
 ամեն տեղի Հայկազունք, եւս առաւել  
 կէս եւրոպականացեալ Իլվովցիները՝  
 այն ժամանակներէն եւս դրած էին ի-  
 րաւամբ իւրեանց միտքը՝ թէ ինչ պա-  
 տիւ որ տան աղգին օժեալ Հայրապե-  
 տին սուրբ Եջմիածնայ Կաթողիկոսին,  
 այն պատիւը՝ գէթ ըստ մեծի մասին՝  
 պէտք է երթայ կաթողիկոսական բար-  
 ձրր աստիճանին եւ սրբոյ Լուսաւորչի  
 Աթոռոյն՝ քան թէ կաթողիկոսին : Եւ  
 երկրորդը այս՝ որ անտարակոյս անտեղ-  
 եակ էին այն ամենայն անցքերուն, որոց

պատճառաւն էր կաթողիկոսին այցելութիւնը:

Ե.

Իլլոյի առաջնորդութիւնը կամ եպիսկոպոսութիւնը սկսած էր 1364 թուականէն, եւ յաջորդաբար հասած էր մինչեւ մեր օրերը: Առաջին տասը եպիսկոպոսներն առ հասարակ Ս. Էջմիածնայ Աթոռէն կրնդունէին իւրեանց ձեռնադրութիւնը՝ եւ հաստատութիւնը՝ մինչեւ Մեսրոպ եպիսկոպոսը, որ վախճանեցաւ 1622 ին եւ աթոռը պարապ մնաց չորս հինգ տարի, գուցէ Մելքիսէթ եւ Դաւիթ կաթողիկոսին հակառակութեանցը եւ Էջմիածնայ շիոթութեանցը պատճառաւ: Ուստի երբ Մելքիսէթ կաթողիկոսը եկաւ Իլլոյ, Նիկողայոս Թորոսեան կամ Նիկոլ Թորոսովիչ անունով կեղծաւոր, վառա-

մոլ եւ խռովարար արեղան բարեկամներու ձեռքով եւ շատ ընծաներ տալով Մելքիսէթին՝ աշխատեցաւ որ ինքը ձեռնադրուի եպիսկոպոս<sup>1)</sup> : Նիկոլը Իլվովի մէջ ծնած էր 1605 ին, յետոյ Աոստանդնուպօլիս գնացած եւ այնտեղ սարկաւագ ձեռնադրուած :

Իլվովի քահանայք եւ ժողովրդեան մեծերը հասկացուցին Մելքիսէթի՝ թէ Նիկոլը իւրեանց առաջնորդ ունենալ չեն կամենար, մանաւանդ թէ կցանկան որ եթէ կարելի է՝ քահանայութիւնն

(1) «Եւ միջնորդացն մատուցեալ առ կաթուղիկոսն՝ ընծայեցին զոսկիս բազումն, և խնդրեցին առնել զՆիկօլայոս արեղայն եպիսկոպոս, և կաթուղիկոսին տեսանելով զյօլովութիւն առ ձեռն պատրաստ ոսկւոյն, նաև ակնկալութիւն ևս յօլովից ոսկւոյ առ յապայն, հաճեցաւ օրհնել զՆիկօլայոսն եպիսկոպոս Իլովայ » : Առաքելք ԻԸ :

եւս առնուի նորամէն՝ անարժան վա-  
 րուցը համար: Մելքիսէթ մտիկ չարաւ:  
 Բողոքեց ժողովուրդը՝ թէ « Հակառակ  
 « է այդ բանդ եկեղեցական կանոնաց,  
 « որ կալատուիրեն ժողովրդեան կամա-  
 « ցը դէմ եպիսկոպոս չըդրուի, ու-  
 « ըիշ արժանաւոր անձ ունիմք »: Մել-  
 քիսէթ տեսնելով որ ժողովուրդը իւր  
 կամաց հնազանդելու միտք չունի, ա-  
 ռաւ նիկոյր տարաւ ծածուկ քաղաքէն  
 դուրս Սուրբ Խաչ վանքը, որ Հահայապոս  
 կասուէր, ( եւ ըստ Առաքել պատմագրի  
 Հահայապոս Առաքաթիւն ), եւ այնտեղ  
 գիշերանց սկսաւ զինքը եպիսկոպոս  
 ձեռնադրել: Այն միջոցին վանքի արե-  
 ղաներէն մէկը վաղեց գնաց իմացուց  
 Հայերուն Մելքիսէթին արածը, եւ նո-  
 քա բազմութեամբ հասան, տեսան որ  
 ձեռնադրութիւնը վերջանալու վերայ  
 է՝ բողոքեցին, կանչուրուտեցին, բայց  
 բանը բանէն անցել էր, տրտում տը-



խուր դարձան իւրեանց տեղերն <sup>(1)</sup> ;  
 չէին գիտեր թէ ինչ պէտք է անեն :

Յիրաւի զարմանալի բան եղած է ամեն ժամանակ մեր ազգին առ եկեղեցականս ունեցած պատկառանքը՝ որով

(1) « Ինմին զիշերի իշխանք և ուամիկք վաղ-  
 « վաղակի գումարեցան ի միասին, և ընդ փոքր  
 « դուն քաղաքին ելեալ փութանակի հասին ի  
 « տեղին. աղաղակէին առ կաթուղիկոսն. Մի օրհ-  
 « ներ զդա, և մի՛ մատներ զմեզ և զեկեղեցիս  
 « մեր ի ձեռս անիրաւիդ այդմիկ. զի մէք զիտեմք  
 « զդա և զորպիսութիւն վարուց դորա. վասն ո-  
 « րոյ ոչ է մեզ ընդունելի. Եւ կաթուղիկոսն նըս-  
 « տեալ ի վերայ աթոռոյ՝ օրհնէր զՆիկօլ արե-  
 « զայն եպիսկոպոս, և խաչիւն որ ի ձեռին էր՝  
 « սաստէր ժողովրդեանն, և զբանս տգեղս՝ զոր  
 « ոչ է պարտ յիշել՝ ասէր նոցա. և թէպէտ ո-  
 « Ղորմելի ժողովուրդքն ամբոխեալ և աղմկեալ՝  
 « յոքնակի աղաղակեցին, ոչ լուաւ նոցա կա-  
 « թուղիկոսն, այլ օրհնեաց զՆիկօլն եպիսկո-  
 « պոս, » և Առաքել. ԻԸ :

նաեւ այսպիսի անարժան եւ անիրաւ  
 բռնութեանց անգամ համբերել են եւ  
 կհամբերեն. բայց միթէ ազգին հեղու-  
 թեամբ ու երկայնամտութեամբը առաջ-  
 նորդաց անիրաւ գործը իրաւացի՞ կլի-  
 նի. ո՞չ ապաքէն անով աւելի եւս կճան-  
 րանայ: Մեկքիսէթ այն հոգեւոր առաջ-  
 նորդներէն էր՝ որ իւրեանց չունեցած  
 իշխանութիւնն ունեցածի պէս կճա-  
 խեն, եւ ունեցածն ի չարն գործածելը  
 իւրեանց բնութիւն արած են: Նիկոլին  
 պէս առելի մարդը հովիւ ձեռնադրեց  
 այնպիսի մէկ հօտի՝ որ գայլու տեղ դը-  
 րած էր զինքը, եւ յիրաւի. իսկ ինքը  
 հանգիստ սրտով ելաւ Ելիովէն որ Կա-  
 մենից քաղաքը երթայ: Ժողովրդականք  
 ձար կիներուէին որ ազատին այն նորըն-  
 ծայ գայլէն, որ զիրենք պատուաւու  
 պատրաստուած էր. գնացին խորհուրդ  
 տուին Նիկոլի որ կաթուղիկոսին հետ  
 իմիասին երթայ՝ իբր թէ զինքը պա-

տուով ճանապարհ դնելու համար: Հասկացաւ Նիկիոյ նոցա միաքր, բայց չընդգիմացաւ. պատասխանեց թէ « Ամենայն սիրով պատրաստ եմ երթալու »: Ճանապարհ ելաւ կաթողիկոսին հետ, եւ մինչեւ մէկ երկու օրուան տեղ գնաց: Արթուղիկոսը դարձաւ ասաց Նիկիոյին՝ թէ « Այսքան տեղ գալդ բաւական է. բարով երթաս քու տեղդ. գնա եպիսկոպոսութիւնդ ի գործ դիր »: Նիկիոյ գիտնալով որ այնուհետեւ ոչ թէ բարեկամաց, հապաբազմաթիւ թշնամեաց մէջ պիտի դառնայ, ուղեց իբր թէ հոգեւոր ղէնքով սպառազինուած՝ դառնալ իւր տեղը. ուստի պատասխանեց կաթողիկոսին՝ թէ « Հրամանքդ աչքովդ « տեսար որ ժողովրդականք սքքան հա-  
 « կառակուլթիւն արին քեզ, եւ չկամե-  
 « ցան զիս ընդունել. այժմ ես մինակ  
 « ի՞նչպէս սիրտ անեմ նոցա մէջ երթա-  
 « լու, կամ այնպիսի ժողովրդոց առաջ-

« նորդու թիւն անելու . ուրիշ բան էր՝  
 « եթէ կամենայիք ձեռքս կոնդակ տալ ,  
 « յորում բանադրանք եւ նզովք դնէիք  
 « զիս չընդունողներուն եւ ինձ հնազան-  
 « գիլ չկամեցողներուն » : Հաւանեցաւ  
 խեղճ Մելքիսէթը , տուաւ Նիկոլին  
 ձեռքը այնպիսի սպառնալից կոնդակ ,  
 — զոր գուցէ ինքն իսկ Նիկոլ շարա-  
 դրած էր , — եւ դարձուց Նլվով :

Նիկոլ դարձաւ , եւ առաջին կիրակի  
 օրը կարդալ տուաւ այն կոնդակն ու  
 նզովքները եկեղեցւոյն մէջ : Նլվովի ժո-  
 դովուրդն եւս մինչեւ այն ժամանակնե-  
 րը այն բարեմիտ ժողովուրդներէն էր՝  
 որ չգիտնալով այս ճշմարտութիւնս թէ  
 « Անիրաւ բանադրանքը եւ անտեղի նը-  
 ղովքը՝ բանադրողին ու նզովողին գըլ-  
 խուն կգառնայ , իսկ բանադրելոց՝ օրհ-  
 նէնքի տեղ կբռնեն » , տրտմեցան՝ տըխ-  
 րեցան՝ գայթակղեցան ու լռեցին :

Այն ժամանակները աղգին մէջ մեծ անուն ունէր Կեսարացի Գրիգոր վարդապետը՝ իւր պարկեշտ՝ խստակրօն վարքովը եւ խոհական իմաստութեամբը, թէպէտեւ միանգամայն խրոխտ էր եւ ինքնահաւան: Սա Կոստանդնուպօլսոյ Պատրիարքութենէն ելած լինելով, այլ եւ այլ տեղեր ճանապարհորդութիւն արած ժամանակը գնացնաւ Ահհաստանի Կամենից քաղաքը 1628 ին, այն միջոցին որ Նիկոլ եպիսկոպոսն եւս Կամենից գնացած էր, եւ Խաչիօ անունով մէկ աբեղայ ձեռնադրած ու անունը Ոնովրիոս գրած էր:

Հին եւ պատուական սովորութիւն է աղգիս՝ որ նորընծայ քահանայն կամ աբեղայն ~~տառաւոր~~ այս ինքն քառասնօրեայ հսկումն՝ առանձնութիւնն ու հոգեւոր կրթութիւնները չվերջացած՝ առաջին պատարագը չմատուցաներ: Նիկոլ եւ նորա կուսակիցներէն ո-

մանք կամեցան որ Անուիրիոս նորընծայն  
 դեռ տասնը հինգ օր անգամ այն կրթու-  
 թեան մէջ շանցուցած՝ ելնէ քառասուն-  
 քէն եւ առաջին պատարագը մատուցա-  
 նէ. — ուշի մնացել էր Նիկոլը Իլլով  
 գառնալու եւ ժողովուրդը տակն ու վրայ  
 անելու: Երբ գնացին Գրիգոր վարդապե-  
 տը հրաւիրելու որ այն հանդիսին ներ-  
 կայ գանուի, նա հասկացուց նոցա թէ  
 այն գործողութիւնը, այս ինքն ժամա-  
 նակէն առաջ քառասունքէ հանելը, Հու-  
 յաստանեայց եկեղեցւոյ աւանդութեան  
 եւ մեր սրբոց Հայրապետաց կանոննե-  
 րուն հակառակ է: Առեցին Նիկոլեանք  
 այն շաբաթը, բայց յաջորդ կիրակին  
 անպատճառ ուղեցին հանել նորընծայն  
 քառասունքէն, եւ նորէն հրաւիրեցին  
 վարդապետը. իսկ նա հրաժարեցաւ  
 ասելով թէ «խօսքն մէկ կուլինի»: Նի-  
 կոլ իւր յանդուգն եւ խռովասէր բը-  
 նութիւնը այն առիթով եւս հասկա-

ցուց, հանեց նորընծայն քառասունքէն  
 ու առաջին պատարագը մատուցանել  
 տուաւ, եւ վարդապետին սիրտը աւելի  
 ցաւցնելու եւ իւր առաջնորդական իշ-  
 խանութիւնն նորա հասկացնելու մըտ-  
 քով՝ մարդ յուղարկեց, փակել տուաւ  
 այն եկեղեցւոյ դուռը՝ որոյ ժամատա-  
 նը մէջ կկենար վարդապետը, եւ բանա-  
 լիները իւր մօտ պահեց: Գրիգոր վար-  
 դապետ սաստիկ առնուեցաւ այն նա-  
 խատիւնքէն, եւ հրատարակեց ժողովրդ-  
 գեան՝ թէ «Անիծեալ լինի այն մարդն  
 որ այսօր գնայ Նիկոլի եկեղեցին»: Տա-  
 րակոյս չկայ որ չափազանց էր վարդա-  
 պետին վրէժլանգրութիւնը ընդ պա-  
 տրուակաւ նախանձայուղութեան ազ-  
 գային աւանդութեանց, բայց պէտք չէ  
 մոռանալ որ այն ժամանակաց եկեղե-  
 ցականներուն իրաւացի եւ անիրաւ բար-  
 կութեանը սովորական ու անարժան  
 գէնքերն էին անէծքն ու բանադրանքը:

երկրորդ՝ Նիկոլի արհամարհանօք նայելը ազգային աւանդից եւ արարողութեանց վերայ անշուշտ յայտնի եղած էր արդէն վարդապետին:

Նիկոլ իւր հնարագիտութիւնը յայսմ եւս բանեցուց, որ ժողովուրդը վարդապետին դէմ գրգռելու համար՝ նորընծային սլատարագէն յետոյ իւր եկեղեցւոյն դուռը փակեց, եւ այնպէս աւագ տօներուն ամբողջ շաբաթը երկու եկեղեցիներն եւս փակ մնացին առանց ժամի եւ սլատարագի: — Այն բաւական չէր, գնաց գրգռեց կամենեցու Վոյ՛ւլ՝ այս ինքն քաղաքապետը, եւ նա իմացուց վարդապետին՝ թէ «Մեծ իշխանն «մեր թուղթ է ուղարկեալ մեզ՝ թէ այդ «վարդապետդ որ ի Թուրքի աշխարհէն «եկեալ է՝ ջաշուտ է եղեր. հրաման չրկայ որ ի քաղաքէդ ելանէ, մի թողուք «որ երթայ, թէ ոչ՝ ձեր գլուխն կերթայ»: Բայց վոյթը քանի մի բարե-



պաշտ իշխանաւորաց միջնորդութեամբ  
բը հասկացաւ վարդապետին անմեղու-  
թիւնը, եւ հրաման տուաւ նորա դառ-  
նալու Տաճկաստան ինչ ճանապարհով  
որ եկած էր, առանց ամենեւին Նյութ  
հանդիպելու:

Գրիգոր վարդապետը անցաւ գնաց  
Մոլտաւիա, անտի Րումէլի, եւ ճանա-  
պարհէն բանադրանք եւ նզովք գրեց  
Նիկոլի գէմ: Տեղն ի տեղը հասկացուց  
այն անցքերը եւ Նիկոլի գործերը նաեւ  
Մուսէս Կաթուղիիօսին, եւ նա Ս. Էջ-  
միածնէն բանադրանաց եւ յանդիմա-  
նութեան գիր գրեց Նիկոլին: Նիկոլ ի-  
սկղբան ծածկեց այն բանադրանաց գը-  
րերը, եւ կամ արհամարհեց եւ բանի  
տեղ չգրաւ, բայց ժողովուրդներն իմա-  
ցան, խռովութիւնը սաստկացուցին,  
կըռուրտեցան հետը համարձակ, եւ ա-  
ռաջինէն աւելի հակառակութիւն ըս-  
կսան անել նորա:

Այս տեսնելով Նիկոլի կուսակիցներն՝  
խորհուրդ տուին որ երթայ Պօլիս կամ  
Կեսարիա, արձակուժ խնդրէ Գրիգոր  
վարդապետէն. երբ նա պատճառ բե-  
րաւ՝ թէ ճանապարհի ծախք չունիմ,  
երեք հազար դահեկան հաւաքեցին  
տուին ձեռքը, անով գնաց մինչեւ Պօ-  
լիս եւ Պրուսա: Պրուսայի մէջ հանգի-  
սեցաւ Նիկոլին՝ Խարբերդցի Արիստա-  
կէս վարդապետը, որ սաստիկ թշնամի  
էր Կեսարացի Գրիգոր վարդապետին.  
Սա Նիկոլի ճանապարհորդութեան նը-  
ստատակը լսելով՝ համոզեց զինքը որ ան-  
ձամբ չերթայ Կեսարիա, այլ գրով ար-  
ձակուժ խնդրէ Գրիգոր վարդապետէն.  
Վասն զի « Գուն եպիսկոպոս ես, կասէր,  
« իսկ նա վարդապետ, նա իշխանութիւն  
« չունի քու վերադ. ապա թէ ոչ, նորա  
« գրած բանադրանքը ես եւս կարող եմ  
« վերցնել, որովհետեւ ես եւս վարդա-  
« պետ եմ»: Նիկոլին գոռոզութեանն

յարմար եւ ձեռնտու էին այն խօսքերը. ուստի նամակ գրեց Գրիգոր վարդապետին, յորում կասէր՝ թէ « Պրուսա եկայ՝ հիւանդացայ, չեմ կարող անձամբ ոտքդ գալ. խնդրեմ որ արձակեո զիս ի բանագրանաց, եւ օրհնութեան գիր գրես ինձ եւ Իլլովի ժողովրդեան »: Հաւատաց վարդապետը Նիկոլի խօսքերուն, արձակեց զինքը բանագրանքէն եւ գրեց օրհնութեան նամակներ: Նիկոլ առաւ ուրախութեամբ թղթերն եւ դարձաւ Իլլով. ժողովուրդըն ուրախացաւ ու հանդարտեցաւ, բայց այն հանդարտութիւնը կարճ ժամանակ տեւեց: Վասն զի Գրիգոր վարդապետը լսեց հասկացաւ Նիկոլի արած խարէութիւնը, եւ գրեց Իլլովի ժողովրդեան թէ « Նոյն առաջին նղովքն եւ բանագրանքը կան եւ կան այդ եպիսկոպոսին վերայ »: Ուստի Նիկոլին ու ժողովրդեան հակառակութիւնը ա-

աւել քան զառաջինն սաստկացաւ  
մինչեւ 1630 թուականը:

է.

Նոյն տարին Մոլսէս Կաթողիկոսին  
աշակերտ՝ Կեսարացի Խաչատուր վար-  
դապետը նուիրակութեան պաշտօնով  
յուզարկուած էր Ասորեստան, Յունաս-  
տան եւ ուրիշ արեւմտեան երկիրները:  
«Եւ էր Խաչատուր վարդապետն այր  
«հեղ եւ հանդարտ եւ քաղցրաբարոյ,  
«ոչ անիմաստ եւ անբանիբուն, որ լոկ  
«տեսութեամբ միայն շահէր զառ ինքն  
«պատահեալսն», բայց գործերէն կե-  
րելի որ կամ խոհեմութիւնը կատար-  
եալ չէր, եւ կամ Նիկոլին չարութիւն-  
ներն այնքան շատ էին՝ որ նուիրակին  
ոչ խոհեմութիւնը կյաղթէր նոցա, եւ  
ոչ հեղութիւնն ու խաղաղասիրութիւ-  
նը:

Վասն զի սա Նրվով հասնելէն յետոյ  
 թէպէտ տեղն ի տեղը լսեց հասկացաւ  
 ժողովրդէն Նիկոլի անկարգութիւններ  
 որոց համար արդէն խօսած էին ի-  
 բեն Աթուղիկոսն ու Պրիգոր վարդա-  
 պետը՝ բայց միշտ քաղցրութեամբ եւ  
 առանձին կխրատէր զՆիկոլ, յուսալով  
 որ շտկէ նա ինքզինքը եւ շահի ժողո-  
 վրդեան սիրտն ու իւր անձին պատի-  
 ւը, սակայն Նիկոլ «Ոչ ի վարդապետէն  
 «ամաչէր, կասէ Առաքել, եւ ոչ ի ժո-  
 «ղովրդոց ամբաստանութենէն երկըն-  
 «չէր, այլ իբրեւ զանշարժ լեռնն ար-  
 «ձանացեալ կայր ի կամս իւր»:

Կիրակի օր մի ժամերգութեան մի-  
 ջոցին հրամայեց Նիկոլ իւր արեղային  
 որ աւետարանը կարդայ. Խաչատուր  
 վարդապետը՝ յայտնի չէ թէ ինչ մըտ-  
 քով կամ ինչ պատճառով՝ դարձաւ ա-  
 սաց թէ թող նա չկարդայ, այլ ուրիշը:  
 Բայց Նիկոլ իւր կամքը կատարեց, աւե-

տարանը իւր արեղային կարգով տուաւ :  
 Վարդապետը , որ արդէն լցուած էր  
 նիկոլի դէմ , տեսնելով որ բոլոր քա-  
 ճանայից ու ժողովրդոց առջեւ իւր  
 խօսքը գետինն ընկաւ , սաստիկ առնուե-  
 ցաւ . դարձաւ դէպ ի ժողովուրդն ու  
 ասաց . « Անիժեալ լինի այն մարդն որ  
 « սորա յետեւէն ծուներ դնէ » : Աստի  
 եւս կերեւի թէ սրբան յաճախեալ էր  
 այն ժամանակներն անէճք՝ բանադ-  
 րանք՝ նզովք ընելու զգուշալի սովորու-  
 թիւնը նաեւ մեր եկեղեցականաց մէջ ,  
 որ Խաչատուր վարդապետին պէս հեղա-  
 հոգի նուիրակն անգամ այնպիսի թե-  
 թեւ պատճառով ամբողջ ժողովրդեան  
 խիղճը պղտորէ եւ եկեղեցւոյ մէջ խռո-  
 վութիւնն ձգէ :

Խաչատուր վարդապետը այն անէճքը  
 տալն ու եկեղեցիէն դուրս ելնելը՝ շի-  
 տակ իւր խուցն երթալը մէկ կանէ : Խ-  
 հոյն բոլոր ժողովուրդն եւս կձգէ կել-

Նէ դուրս, եւ կմնան միայն Նիկոլ եւ  
 ուրիշ քանի մի հոգի: Երբ ժամը կվեր-  
 ջանայ ու նորա եւս կելնեն դուրս՝ կու-  
 գան Իլիովի Հայոց դատաւորներն ու  
 իշխանները, կփակեն եկեղեցւոյն դռ-  
 ներն ու բանալին կառնուն կպահեն,  
 եւ այնպէս քանի մի օր փակ կմնայ ե-  
 կեղեցին:

Իշխանները կմտածեն որ այս անկար-  
 գութեանց վերջ տալու է օրինաւոր  
 կերպով: Խորհուրդ կուտան Խայատուր  
 Վարդապետին որ իբրեւ նուիրակ Սրբ-  
 րոյ Աթոռոյն Եջմիածնի՝ դատաստան  
 բանայ Նիկոլի վերայ, եւ քննութեան  
 տակ ձգէ նորա ամեն գործերն ու յան-  
 ցանքները: Նիկոլ այն խորհուրդը իմա-  
 նալուն պէս՝ իւր մօտ կկանչէ երկու  
 Ահաջի վկաներ, — որ ըստ Իլիովի սո-  
 վորութեան՝ Հայոց ամեն դատաստան  
 կարելուն ներկայ պիտի գտնուէին իբ-  
 րեւ Ահաջ տէրութեանը կողմանէ, —

եւ խօսք կղնէ նոցա հետ որ գան պահ-  
 ւըտին դատարանին մէկ կողմը, կամ  
 թէ վերի յարկը — որովհետեւ դատա-  
 րանը եպիսկոպոսարանին ներքեւն էր,  
 — եւ ինքը ձայն տալուն պէս՝ դուրս  
 ելնեն: Գատաստանին օրը Խաչատուր  
 վարդապետը կերթայ կնստի ատեանը,  
 իշխաններն ու դատաւորներն իւրեանց  
 տեղերը կնստին ու Նիկոլը ներս կկան-  
 չեն: Ամանէ Նիկոլ, կնայի որ առաջին  
 տեղը վարդապետը նստել է, կհրամայէ  
 սպասաւորներուն որ իւր աթոռը սովո-  
 րական տեղը դնեն՝ ուրիշներէն վեր,  
 Աստեն իշխաններն թէ « Ի՞նչ է արա-  
 « ծըդ, դուն դատուելու համար կան-  
 « չուած ես, ի՞նչպէս կարող ես նստիլ .  
 « այդտեղ ոտքի վերայ պիտի կենաս » : —  
 « Գատուելո՞ւ, կասէ Նիկոլը. հապա ո՞վ  
 « է զիս դատողը: » — « Ահա այսնոր եկած  
 « նուիրակը, եւ այս դատաւորները,  
 « միթէ չե՞ս տեսներ » : Այն ատեն բար-



ձըր ձայնով կկանչէ Նիկող Աեհացի վր-  
 կաներուն « Գուրս ելէք » . եւ նոքա իս-  
 կոյն կեւնեն իւրեանց պահուրտած տե-  
 ղէն, կուգան ներս: « Աստուծոյ սիրոյն  
 « համար, կասէ Նիկող, դուք ձեր աչ-  
 « քովը տեսէք ու վիայ եղէք ինձ, որ  
 « ես եպիսկոպոս, եւ սոքա աշխարհա-  
 « կան, ժողովուել են որ զիս դատաս-  
 « տանի տակ ձգեն: Այդ վարդապետն  
 « որ թիւրքաց երկրէն է, լրտեսութիւն  
 « անելու համար եկել է մեր երկիրը,  
 « այժմ սոցա հետ ի միասին նստել է  
 « որ իմ դատաստանս կտրէ, վկայ էք » :  
 Մարդիկը պատասխան կուտան թէ  
 « Մեք ինչ որ մեր աչքովը տեսանք՝ վր-  
 « կայելու միշտ պատրաստ եմք » : Այն-  
 տեղ ժողովուած բոլոր Հայերը, քահա-  
 նայք, իշխանք եւ դատաւորք, կապշին  
 կմնան, եւ ֆռանկաց երկիւղէն սարսա-  
 փած՝ իրարու ետեւէ կեւնեն կվախչին,  
 վարդապետն եւս իւր խուցը կքաշուի:

Այն յաղթութեամբ սիրտ առած՝  
 կրօնսի այնուհետեւ նիկոլ կեղծաւորու-  
 թիւնը ձեռք առնուլ նորէն. միջնորդ-  
 ներ կրօնէ, մարդիկ կյուղարկէ վար-  
 դապետին, քահանաներուն եւ իշխան-  
 ներուն որ գան հաշտուին իւր հետ-  
 • Այսքան հակառակութիւնը բաւական  
 • է, կասէ, եկէք բացէք եկեղեցւոյ  
 • գուռը, մինչեւ ե՞րբ փակ պիտի մնա»  
 Իլլովցիք լաւ գիտնալով նորա խարդախ  
 ու նենգաւոր բնաւորութիւնը՝ չհաւա-  
 տացին խօսքերուն, ամենեւին մտիկ չա-  
 րին. իսկ վարդապետը կտեսնէր որ այդ  
 խռովութիւնն ու կռիւները քանի կեր-  
 թան՝ դայրանալու են. ուստի խօսեցաւ  
 քահանաներուն ու իշխաններուն որ  
 եպիսկոպոսին հետ հաշտուելու մէկ  
 ձարը նային. «Իմ երկխղս այն է՝ կա-  
 • սէք վարդապետը, որ այդ եպիսկոպոսը  
 • կարող է մեծամեծ վնասներ հասցնել  
 • մեզ տէրութեան ձեռքովը՝ եթէ մին-

« չեւ վերջը մեր յամառութեանը մէջ  
 « մնամք » : Եւ վստիք սպասասխան տուին  
 թէ « Ամենեւին մի վախնար՝ վարդա-  
 « պեա, վասն զի մեք քանի քանի՜ հրո-  
 « վարտակներ ունիմք Վեհաց հին թա-  
 « գաւորներէն՝ որ ինչ եւ իցէ դատաս-  
 « տան որ պատահի մեր ազգին մէջ, մեր  
 « Հայոց դատաւորները պիտի կտրեն,  
 « ոչ թէ Վեհաց դատաւորները, այն թո-  
 « դումք. եթէ նոքա ապրանք ունին,  
 « մեր եւս ունիմք. եթէ նոքա խելք ու-  
 « նին, փառք Աստուծոյ մենք եւս ու-  
 « նիմք. ուրեմն քու երկիւղդ ինչէ՞ն  
 « է » \* ) : Այսու ամենայնիւ վարդապե-  
 տին սիրտը չհանգչեցաւ. երբեմն շատը  
 ի միասին եւ երբեմն առանձին առան-  
 ձին կկտրատէր կյորդորէր որ հաշտուին

(\*) « Այլ և ունիմք զապրանս ընդ ապրո-  
 « նաց նոցա, և զխելս ընդ խելաց նոցա, և դու  
 « զի՞ ևս երկնչիս », Ա. 111, 18:

եպիսկոպոսին հետ, բայց ճար չեղաւ,  
ամենեւին կամք չտուին: Այն ատեն  
վարդապետը ձեռքը իւր փողպատին  
տանելով ու օձիքը թոթովելով ասաց  
բազմութեան առջեւ՝ թէ «Նս անպարտ  
«եմ՝ այդ բանէդ առաջ գալու չարեաց  
«մեղադրանքէն, ինչ գիտէք արէք»:

Ը.

Մինչեւ այն ժամանակ որչափ ան-  
պատշաճ եւ գայթակղական բաներ որ  
եղան՝ գոնէ ազգին ու ժողովրդեան մէջ  
էին. ուստի եւ ի նոցանէ առաջ եկած  
ու գալիք վնասներուն դարման անելը  
անկարելի բան չէր: Երկու առաջնորդ,  
թէպէտեւ մէկը դատաւոր եւ միւսը  
դատաստանի տակ՝ զիմացէ զիմաց ե-  
կել էին. երկուքն եւս՝ որը շատ՝ որը  
սակաւ՝ իւրեանց հետ ժողովրդեան  
մէջ կուսակիցներ ունէին. ո՛չ ապաքէն

յայտնի է թէ այն երկու կողմին որն  
 եւս յաղթող գտնուէր՝ խռովութիւնն  
 ու թշնամութիւնները շուտով պիտի  
 չգաղբէին. պէտք չէր որ երկու կող-  
 մէն խաղաղարար մարդիկ մէջ մտնէին  
 ու հաշտացնէին երկպառակեալները,  
 եւ Խաչատուր վարդապետը մինակ եւ  
 անօգնական չմնար իւր խոհական ջան-  
 քին մէջ: Այ՛ մեր ազգին մեծամեծ դժ-  
 բաղդութեանց մէկն այս եղած է ամէն  
 ժամանակ՝ որ քահանայ քահանայի,  
 աշխարհական աշխարհականի, ժողո-  
 վուրդ ժողովրդի գէժ կռուրտած որ  
 տեսնեն, ի հարկէ այս երկուքին մէկը  
 պիտի յաղթէ ու միւսը պիտի յաղթուի,  
 ու պէտք է որ այնպէս լինի ասելով,  
 կամ անտարբեր կը կենան եւ կամ ին-  
 քեանք եւս կռիւր կսաստկացնեն: Ա-  
 սով է ահա որ ազգին վնասը եւ օտա-  
 րաց առջեւ նախատինքը շատ անգամ  
 միմիայն պտուղ կլինի այնպիսի հակա-

աւիութեանց եւ յաղթութեանց. յաղ-  
 թութեանց ատելութեամբ ու թշնամու-  
 թեամբ կմխայ անդադար, ծածուկ հը-  
 նարքներով վրէժխնդրութեան ետեւէ  
 կընկնի, եւ յաղթողն բարձր ի գլուխ  
 պանծալով իւր հակառակորդին գէմ՝  
 յաղթութեանը յարգը կկորսընէ: Նրկու-  
 կողմի կուսակցութիւններն եւս կնստին  
 ողբ ու լաց կանեն՝ որ մեր աղգը ան-  
 միաբան է, եւ միաբանութիւն անելու  
 աշխատանքը ոչ ոք յանձն չառնուր,  
 եւ ոչ իսկ եկեղեցականը, որոյ պարտքն  
 է ոչ միայն իսկապէս ինչն տալ ամենեւոր-  
 սուրբ սեղանոյն առջեւը, այլ եւ տուա-  
 ծին պտուղը ժողովրդէն պահանջել:

Նիկոլի կուսակիցներն մինչեւ այն  
 ժամանակ Նիկոլցոց մէջէն նորա էին՝ որ  
 եւրոպական բարակութիւնները՝ հան-  
 դերձ սակաւ ազգասիրութեամբ՝ աւելի  
 վեր կդնէին քան թէ ազգային հոգւոյն  
 անկորուստ պահպանութիւնը հանդերձ

քանի մի կարծեցեալ կոպտութիւններով: Սոքա Նիկոլին չարամտութիւնը չունէին: Վասն զի նորա փառամուլ եւ ազգատեաց կիրքերէն եւս ազատ էին. բայց ի՞նչ օգուտ, միթէ նորա կիրքերուն զօրաւոր գործիք եւ պաշտպան լինելը բաւական պակասութիւն չէ՞ր:

Երբ թշնամութիւնը սաստկացաւ, ու տանուաէրները եկեղեցին չկամեցան բանալ: Նիկոլ ելաւ գնաց Եղն-Էննէրոն՝ որ այն ժամանակները շատ զօրացած էին ամէն տեղ, եւ խօսք տուաւ նոցա որ ինքն եւ իւր ժողովուրդը ելնեն Հայոց Կաթողիկոսին հնազանդութենէն ու Հռովմայ պապին իշխանութեանը տակ մտնեն: Եւ ձեռագիր տուաւ նոցա անլո-ժանելի, ինչպէս որ կասէ Առաքել պատմիչը, թէ «Նս Նիկոլայոս եպիսկոպոս Հայոց՝ իմովս կամաւ միաբանեցայ ընդ եկեղեցւոյն Հռօմայ, եւ մտի ի հընազանդութիւն փափին ամենիւք հե-

« տեւելովքն իմովք՝ կատարել զամե-  
 « նայն հրամանս որք առ ի նմանէ » :  
 Պղտոր ջրի մէջ ձուկ որսալը ամեն ժա-  
 մանակ եզուլիթներու մեծ վարպետու-  
 թիւնն եղած է. ուստի եւ ոչ քննել  
 կամեցան նոքա թէ Նիկոլին այս կեր-  
 պով իւր ազգն ու եկեղեցին մատնելը  
 ի՞նչ պատճառէ առաջ եկած է : Իւր-  
 եանց առջեւ մէկ բան միայն կար. ամ-  
 բողջ ժողովուրդ մի պապին հպատա-  
 կեցընելով՝ Հռովմայ եկեղեցւոյն նոր  
 ծառայութիւն մի անել . այն նպատա-  
 կին հասնելու համար՝ որ եւ իցէ միջոց  
 լաւ ու գովելի կերեւնար աչքերուն :  
 Առին Նիկոլը մեծ ուրախութեամբ տա-  
 րին Նլլովի արքեպիսկոպոսին, եւ ամէն  
 բան հասկացուցին անոր : Արքեպիսկո-  
 պոսը տեսաւ որ Նիկոլին առաջարկու-  
 թիւնը իւր մտքին եւս յարմար է, բայց  
 պատճառներն ու հետեւանքները աչքը  
 վախեցուցին, հասկացաւ որ այն լու-



սաւորչական Հայերուն կաթոլիկ կամ  
 պապական լինելը՝ ի մոլորութենէ ի  
 ճշմարտութիւն գառնամք ասելու մըտ-  
 քով չէ, այլ իւրեանց ազգակցացը գէմ  
 դորանալու համար է. ուստի քաղաքա-  
 կան կռիւ տեսնելով բանին մէջ՝ քա-  
 ղաքապետին յուզարկեց: Քաղաքապե-  
 տը իմաց տուաւ Հայոց իշխաններուն  
 որ կամ եկեղեցին բանան, եւ կամ դա-  
 տաստանի գան. բայց իշխանները մտիկ  
 չարին, վասն զի պարտական չէին մտիկ  
 անելու նորա: Գործը մնաց եղուիթնե-  
 րուն եւ ուրիշ լեհացի կրօնաւորաց, որք  
 թէպէտ միշտ հակառակ էին իրարու,  
 բայց այն անիրաւութիւնը գործելու  
 համար սիրով միաբանեցան: Սոքա  
 իւրեանց հետ առին գպրատան տղայոց  
 բազմութիւն մի, — վասն զի չափահաս  
 ու խելացի մարդիկ չէին մտներ այնպի-  
 սի անիրաւ եւ անպատշաճ գործի մէջ,  
 — գնացին քաղաքապետին, եւ քանի

մի զինուոր առած հասան Հայոց եկեղեցւոյն դուռը: Մարդ յուղարկեցին. Հայոց տանուտէրերուն որ կամ գան եկեղեցին բանան, եւ կամ բանալիներն տան: Նոքա սլատասխան յուղարկեցին թէ «Այդ եկեղեցին մերն է, եւ մեր «փողովը շինել եմք՝ թագաւորական «հրամանաւ, մէջի եղած սպասներն ու «անօթներն եւս մերն են: Իսկ այդ Նի- «կոլն որ դուք եսլիսկոսոս կհամարիք՝ «մեր առաջնորդը չէ, նդովքի տակ է: «Դուք ո՞վ էք եւ ի՞նչ իրաւամբ կպա- «հանջէք մեզնէ մեր եկեղեցին կամ ա- «նոր բանալիքը»:

Եղու իթները ծիծաղեցան Հայոց բարեմտութեանը վերայ. «Խեղճ մարդիկ, «կասէին, չեն գիտեր որ մեք ոչ միայն «այս եկեղեցւոյն՝ այլ եւ ամենայն եկեղեցեաց տէր եմք. մեր առջեւ փակ «դուռ չկայ, եւ պէտք չէ որ լինի. մեր «զձեզ բռնութեամբ կաթոլիկ պիտի ա-

« Եւեմք որ ձեր զաւակաց եւ թուներուն  
 « կաթուղիկու թիւնը կամաւոր եւ ապա-  
 « հով լինի: Նիկող թէ վատ մարդ է, ա-  
 « նիրաւ մարդ է, մեր ի՞նչ փոյթն է.  
 « Բաւական է որ մեր դիտաւորութեան  
 « լաւ կճառայէ, քան զինքը լաւ մարդ  
 « չկայ: Եկեղեցւոյն տէր մեք եպիսկո-  
 « պոսը կճանաչեմք. եպիսկոպոսը զիւր  
 « եկեղեցին ու ժողովուրդը մեզ ծախեց  
 « կամ ընծայեց՝ իբրեւ փոխանորդաց  
 « եւ պաշտօնէից պապին. ս՞իլ կարող է  
 « այս բանիս արդեւք լինել առանց հե-  
 « րեախիոսութեան մէջ ընկնելու: Եկե-  
 « ղեցին կաթուղի է, հերձուածողները  
 « բանալիները չեն տար. կը կոտրեմք  
 « դռները, կը տիրեմք մեր ստացուած-  
 « քին »: Այս ասին ու հրամայեցին որ  
 « դռները կոտրուին. մտան ներս, յանձ-  
 « նեցին եկեղեցին Նիկոլի՝ մէջի ամեն  
 « սպասներովը. յետոյ մարդ յուղարկե-  
 « ցին քաղաքին ամէն կողմերն որ Նիկոլի

գլխաւոր հակառակորդներէն զով որ  
գտնեն՝ թէ քահանայ եւ թէ աշխար-  
հական բռնեն բանտ դնեն ու տուգան-  
քի տակ ձգեն իբրեւ ապստամբ եւ խը-  
ռովարար մարդիկ:

Ինչպէս լաւ կներկայացնէր Նիկոլ  
այն կաթոլիկու թիւնը՝ որ մեր ազգին  
մէջ ինչ եւ իցէ ժամանակ եւ որ եւ իցէ  
տեղ մտել է եզուիթներու եւ նոցա  
հետեւող անխիղճ ու կրօնամոլ մարդ-  
կանց ձեռքով: Խեղճ Անեցիք, երբ Ալ-  
փասլանի ու Չարմաղանի բռնութիւն-  
ներէն փախչելով խաչապաշտ քրիստո-  
նէից երկիր կերթամք ասիք ու եկաք  
Վեհաստանի գեղերն ու քաղաքները  
շէնցուցիք, արդեօք կանցնէ՞ր ձեր մըտ-  
քէն թէ օր սխաի գայ որ ձեր թոռնե-  
րը՝ ձեր ու նոցա շինած ու զարդարած  
եկեղեցիէն գուրս վռնտուին, Վուսա-  
ւորչական լինելով՝ հերշո-ամաղ հերեպե-  
կոս ասուին, ձեր սիրած ու խօսած լե-

դուն բոլորովին մոռանան, եւ Հայ ա-  
սուելէն անգամ ամաչեն, . . .

Այնուհետեւ զօրացաւ Նիկող ե-  
ղուիթներուն պաշտպանութեամբը, եւ  
տիրապետեց եկեղեցւոյն ոսկեղէն եւ  
արծաթեղէն սպասներուն, փառաւոր  
ոսկեհուն զգեստներուն, սրբոց ար-  
ծաթապատ եւ ոսկիապատ մասունքնե-  
րուն, հազար կտորէն աւելի հին ձե-  
ռագիրներուն, մեր թագաւորաց ժա-  
մանակներէն մնացած ցանկալի յիշա-  
տակներուն՝ որ Հայաստանէն այն տեղ  
բերուած էին, եւս եւ եկեղեցւոյ մէջ  
պահուած աւանդներուն\*):

---

(\*) Առաքել պատմիչը տեղով կգրէ. «Ի մէջ  
«եկեղեցւոյն կայր զանձատուն, և ի նմա զիրք  
«և անօթք յոյժ բազումք. զրեանք աւելի քան  
«զհազար փերթ (այս ինքն հատոր կամ կտոր),  
«ամենեքեան ընտիրք և պատուականք. յորս  
«էին ոսկեառուփ աստուածաշունչք և աւետա-  
«րանք, և շարակնոցք և այլ զրեանք բազումք»

Գրաւեց նաեւ Հայոց միւս եկեղեցի-  
ներն ու վանքերը: Եւ ժողովուրդը ա-  
ռանց եկեղեցւոյ մնաց: Մեր ազգին ժա-  
մասէր ու եկեղեցասէր բնաւորութիւ-  
նը գիտցողները միայն կարող են հաս-  
կանալ՝ թէ ինչ աստիճանի ցաւ, գան-  
գատ, գայթակղութիւն, ողբ եւ սուգ  
տիրած պիտի լինի Հայոց մէջ՝ երբ այս-  
պէս առանց եկեղեցւոյ մնացին անհո-  
վիւ ու անփարախ ոչխարներու նման:

Եկեղեցական ինչ տներ, կայուածներ,  
հողեր, խանութներ որ կային, ամենուն

« Սոյնպէս և անօթք, սկիհք և խաչք, քշոցք  
« և բուրվաոք, կանթեղք և աշտանակք, շուր-  
« ջաոք և եմփիորոնք, թաղք և վակաոք, սուրբ  
« նշանք և սրբոց նշխարք, ի հարց և ի հաւուց և  
« ի վաղեմի և ի նախկին թագաւորաց ունէին  
« մուրհակք և նոմոք, և այլ ևս ինչ յոյժ բա-  
« զում: Սոքա ամենեքեան ի մէջ եկեղեցւոյն  
« էին ի նոյն գանձատանն, զորս գրաւեաց ընդ  
« իւրով իշխանութեամբն՝ Նիկոյն: »

վերայ ձեռք դրաւ, ասելով թէ « Ես ե-  
 « պիտկոպոս եմ », ուստի եկեղեցինե-  
 « րըն ու նոցա մէջ եղած աւանդները,  
 « ստացուածքները իմն են » : Եպիսկո-  
 պոսական աստիճանին ուրիշ ամէն  
 պարաքերուն հետ այս ճշմարտութիւնն  
 եւս ոտքի տակ առել էր յանդուգն  
 բռնակալը՝ թէ Եպիսկոպոսը վերահայտ-  
 եւ խնամակալ միայն պիտի լինի եկեղե-  
 ցեաց եւ եկեղեցական բաներու, եւ ոչ  
 թէ Կէր եւ ժառանգ, որովհետեւ ժողո-  
 վուրդն է նոցա շինողը, պահպանողն  
 ու զարդարողը :

Թող չասէ ոք թէ ի՞նչ հարկ կար  
 այդպիսի ցաւալի անցքերը, անցած գը-  
 նացած հին պատմութիւնները նորէն  
 մէջ բերել, Թող յիշէ այնպիսին որ հին  
 պատմութիւնները նոր մարդկանց հա-  
 մար՝ մեզ համար գրուած են, որպէս  
 զի մեք խելք սովորիմք, լաւին հետեւիմք  
 ու վատէն զգուշանամք. ինչպէս որ մեք

եւս մեր ժամանակի պատմութիւնները  
մեր յաջորդներուն համար կգրեմք: Ա-  
թէ Ահհաստանի Հայոց կաթողիկ լինե-  
լուն պատմութիւնը տեղն ի տեղ գիտ-  
նային մերազնեայք, շատ հաւանական  
է որ երեսունը հինգ տարուրնէ ի վեր  
Պոլսոյ Հայոց մէջ պատահած խռովու-  
թիւնները չէին պատահեր: Քայց մեք  
պատմութիւնը առաջ տանիմք, հին եւ  
նոր անցքերն իրարու հետ բազդատելու  
հոգը ազգասէր ընթերցողաց կթողումք:

Խաչատուր վարդապետը Նիկոլին ա-  
րածները տեսնելով՝ ելաւ քաղաքէն,  
գնաց Սուրբ Խաչ վանքը քաշուեցաւ,  
բայց նորա մօտ եկող գնացող պահաս  
չէր Նիկոլի ժողովրդէն: Նիկոլ կամե-  
նալով որ Խաչատուր վարդապետին աչ-  
քը վախնայ ու ժողովուրդը իրեն գէմ՝  
գրգռելու գիտաւ որութիւն անգամ  
չունենայ, զինուորներ յուղարկեց որ  
վանքը պաշարեն: Հարցուցին վանական-



ները զինուորներուն՝ թէ ի՞նչ կուղէք.  
 նորա պատասխան տուին թէ, « Այտեղ  
 լրտես մի կայ՝ օտար տէրութենէ եկած  
 պահուրտած, զինքը պիտի բռնեմք » :  
 Ա՛ր եւ իցէ բռնաւորութիւն այն ժա-  
 մանակ աւելի զօրաւոր է երբ հնարա-  
 գիտութեամբ ու կեղծաւորութեամբ  
 խառն լինի. Նիկոլ երկուքն եւս ունէր :  
 Հետը իւր կուսակիցներէն քանի մի հո-  
 գի առած՝ գնաց հասաւ վանքը, եւ  
 պատահած բաներն չգիտնալու զարնե-  
 լով՝ ինքն եւս հարցուց զինուորաց ու  
 նոյն պատասխանն ընդունեցաւ . յետոյ  
 ասաց նոցա, « Դուք այժմ՝ գնացէք աս-  
 կից, ես պէտք եղածը կհասկըցընեմ ի-  
 բեն » : Ներս մտաւ, առաւ Խաչատուր  
 վարդապետը, տարաւ քաղաքն ու պա-  
 տուով կըպահէր. միտքը այն էր որ  
 զնա եւս իւր կողմը որսայ, եւ նորա  
 հետ բոլոր ժողովուրդը. ուստի Վեհա-  
 ցի կրօնաւորներ յուղարկեց քանի մի

անգամ՝ որ հաւատոյ մասանց վերայ  
 վէճեր անեն հետը, եւ նորա երկու-  
 թիւն ասել չուղելուն համար՝ «Ուրեմն  
 դուք եւտիրական էք», կասէին: Ասար-  
 ծէին այն կեղծաւորներն որ գիմացիինն  
 հաւատքը պակասաւոր գտնելն ու նա-  
 խատելը՝ զնա դարձի բերելու եւ որսա-  
 լու հնարք է, ինչպէս ուրիշներն եւս  
 փորձեցին ու խայտառակ եղան:

Ուշագրութեամբ գիտելու եւ շատ  
 դարմանալու արժանի բան: Մեր ազգը  
 ամեն ժամանակ ջանացել է իւր դաւա-  
 նանքը՝ իւր ուղղափառութիւնը պաշտ-  
 պանել օտարաց զրպարտութիւններուն  
 դէմ՝ առանց նոցա հաւատքը պակա-  
 սաւոր եւ մոլորական գտնել ջանալու  
 եւ պախարակելու. ո՞վ կարող է չգոյնել  
 իւր այս գեղեցիկ ու քրիստոնէական  
 կատարելութիւնը, բայց եթէ այն լա-  
 տիններն ու յոյներն որ ամեն ժամա-  
 նակ հաւատքը պատրուակ առել են ի-

րենց տիրապետական հոգւոյն ու զըր-  
պարտելով ասել են Հայերուն՝ թէ «Նուք  
մոլորեալ էք, ձեր բռնած ճանապարհը  
ծուռ է, ձեզ փրկութիւն չկայ՝ մինչեւ  
որ ձեր ազգային աւանգութիւնները,  
արարողութիւնները, փարգապետու-  
թիւնները չթողուք ու մեզ չհետեւիք,  
մեզ չհպատակիք»։ Եւ այսպիսի խօս-  
քերուն ոյժ տալու համար՝ մեր խեղճ  
ազգին տառապանաց եւ նեղութեան  
ժամանակները յարձակել են միշտ վե-  
րան, որպէս զի երբ մերոնք փոթորիկէ  
եւ որոտմունքէ խուճապեալ դառանց  
պէս լեռներու՝ դաշտերու հովիտներու  
մէջ վազվրուտեն՝ նոքա քանի մի հոգի  
լւրեանց արիւնարբու շահասիրութեա-  
նը որս անեն։

Այսպէս չարի՞ն Յոյնք սրբոյն Սահա-  
կայ ժամանակ՝ երբ մերոնք կրակա-  
պաշտ Պարսից դէմ լւրեանց քրիստո-  
նէութիւնն ու հայրենիքը կը պաշտպա-

նէին. Եզր Կաթուղիկոսին ժամանակ՝  
 երբ Հերակլ կայսեր արշաւանաց միջո-  
 ցին՝ Հայոց օգնութեանը կարօտ էին.  
 Շնորհալուոյն ժամանակ՝ երբ Բիւզան-  
 դեան կայսերութեան ոյժը օրէ օր ա-  
 րեւելքէն պակսելու հետ էր: Այսպէս  
 չարի՞ն շատ ու շատ անգամ եւ Լատին-  
 նացիք՝ Ռուբինեանց օրերը, երբ Հայոց  
 փոքրիկ մէկ թագաւորութիւնը՝ հա-  
 մաշխարհական ջրհեղեղէ ազատած ազ-  
 գատոհմի պէս՝ Կիլիկիոյ բարձրաբերձ  
 լեռներն ապաւինել, արեւմտեան քը-  
 րիստոնէից օգնութիւն կպաղատէր:

Չհարցընէ՞ մէկը թէ արդեօք ի՞նչ էր  
 Յունաց եւ Լատինացւոց պահանջմուն-  
 քը. արդեօք Հայք Սաբելի՞, Արիոսի՞,  
 Ապողինարի՞, Նեստորի՞, Եւտիքէսի՞ եւ  
 նոցա նման աղանդապետներո՞ւ կհետե-  
 ւէին որ այդպէս իբրեւ անհաւատ ժո-  
 ղովուրդ եւ կորստեան որդիք անար-

գուլին, դատապարտուին ու ի դարձ եւ  
յուզղղութիւն բռնադատուին:

— Այ բնաւ: Աւրեմն ի՞նչ էր նոցա  
գլխաւոր յանցանքն Յսւնաց ու Վատի-  
նացւոց առջեւ: — Այո միայն՝ որ թէ-  
պէտեւ զմի եւ զնոյն Քրիստոս հասար-  
եալ Աստուծոյ եւ հասարեալ Տարդ կղա-  
ւանէին, բայց երկուքնսն ունի ասե-  
լէն կղղուշանային. յայտնի բան է որ  
նորա եւս իւրեանց իրաւունքն ունէին  
. . . : Արդ միթէ ասոր համար Յոյնը  
պէտք էր ասէր Հայուն՝ թէ դուն Քրի-  
ստոսն անգամ չես, թող թէ ոչ ու-  
րեւ. Վատինը պէտք էր ասէր՝ թէ  
դուն հերձուհոյ ես, հերձուհոյ ես, ար-  
քայութեան գուռը քեզի դէմ փակ  
պիտի մնայ: Այն ասպարէն այսպիսի խօս-  
քերով աւելի իրաւունք կուտային եւ  
կսւանան վշտացեալ Հայոց՝ զգուելու  
խորշելու իրենցմէ եւ իւրեանց փարի-  
սեցի պաշտօնեաներէն . . . :

Տեսաւ Խաչատուր վարդապետն որ  
Նիկոլ զինքը հանգիստ պիտի չթողու,  
դարձաւ գնաց Էջմիածին, ու բոլոր տե-  
սածները ու լսածները պատմեց Մովսէս  
Կաթողիկոսին եւ միաբանիցն: Նորա  
հետ յուղարկեցին Իլվովցիք Սիմոն քա-  
հանայն եւ պատուաւոր աշխարհա-  
կան մի՛ աղաչելով Կաթողիկոսին որ  
օգնութիւն անէ իւրեանց: Այն ազգա-  
սէր եւ խաղաղասէր Հայրապետն եւս  
աղաչանաց թղթեր գրեց պապին, Լե-  
հաց թագաւորին, եւ Իլվովի արքեպիս-  
կոպոսին՝ որ խղճան Հայերուն վերայ եւ  
առանց եկեղեցւոյ չթողուն զնոսա: Պա-  
պին տալու պատասխանը կարելի էր  
գուշակել՝ որ եզուիթներուն ուղածին  
պէս պիտի լինէր, այս ինքն պիտի ա-  
սէր՝ թէ «Թող Իլվովի Հայերը գաւա-  
նութիւն տան» որ պապական Կաթողիկէ  
«են», եւ թէ ով որ պապին չհնազան-  
դիր՝ դժօխոց որդի է, եւ թէ որ Հայն

« որ իւր սեպհական կաթուղիկոսին եւ  
 « հոգեւոր առաջնորդներուն կը հնա-  
 « ղանդի) հերշո-աթոզ ու հերեպիկոս է) —  
 « այն ատեն ես կը հրամայեմ որ եկե-  
 « ղեցիները դարձուին իրենց », ինչպէս  
 որ յետոյ տեսնուեցաւ :

Եւհայ թագաւորը, իշխաններն ու  
 արքեպիսկոպոսն անգամ աւելի գթա-  
 սիրտ երեւցան, հրամայեցին Նիկոլի որ  
 եկեղեցիները ժողովրդեան յանձնէ .  
 բայց եղուիթները նոցա ամենուն եւս  
 դէմ կեցան: Թագաւորն ելաւ մեծ հան-  
 դիսով գնաց Հայոց եկեղեցին՝ որ բըռ-  
 նութեամբ առնու զայն եւ յանձնէ  
 Հայոց . իսկ Նիկոլ զայն որ լսեց՝ իսկոյն  
 գնաց պատարագի զգեստները հագաւ,  
 եւ սուրբ հաղորդութեան ահաւոր խոր-  
 հուրդը ձեռքն առած՝ թագաւորին  
 առջեւն ելաւ՝ անով սպառնացաւ իրեն:  
 Եթէ Վլատիսլաւի միտքն ու բարեպաշ-  
 տութիւնն եւս այնչափ լուսաւոր լի-

նէին՝ որչափ որ սիրտը բարի էր, ան-  
տարակոյս պիտի հրամայէր որ սրբու-  
թիւնը առնուն այն անարժան եպիսկո-  
պոսին ձեռքէն՝ իբրեւ ի ձեռաց Յու-  
դայի մասնչի, եւ զինքը բանտ դնեն  
իբրեւ սրբապիղծ բռնաւոր. բայց տկա-  
րամիտ թագաւորը չհամարձակեցաւ  
ներս մտնելու, ահով ու դողով ետ  
դարձաւ:

Երբ տեսան Հայերն որ աշխարհական  
իշխանութիւնը բան չկարողացաւ անել  
Նիկիոյին դէմ, առին Վաթուղիկոսին  
թուղթը, թագաւորէն ու արքեպիսկո-  
պոսէն եւս յանձնարարական նամակ-  
ներ, Հռոմ գնացին որ պապէն օգնու-  
թիւն գտնեն: Իսկ Նիկիոյ եղուիթներէն  
առաւ նոյնպիսի թղթեր, նոցա ետեւէն  
հատաւ Հռոմ, եւ այն տեղի եղուիթնե-  
րուն ձեռքովը այնպէս դարձուց բա-  
ներն՝ որ պապը նորա տուաւ իրաւուն-  
քը, եւ խեղճ Հայերը տրտում ախուր



դարձան գնացին Իլլով (\*): — Այս եւս  
 ապացոյց մի՛ որ Գեր. Հասունեանէն  
 դժգոհ Պօլսեցի հայածէս կաթոլիկներ  
 ըր սրբան իրաւունք ունէին մօտ տա-  
 րիներս պատգամաւորներ չյուզարկե-  
 լու Հռոմ առ Պիոս Թ. գիտնալով որ  
 իւրեանց ձայնը ամենեւին պիտի չլսուի,  
 եւ Հասունեանը աւելի պիտի գօռսղա-  
 նայ իւր կարծեցեալ յաղթանակովը,  
 ինչպէս որ անօրէնն Նիկոյ այն ժամա-  
 նակը իբր թէ փառաւոր յաղթութիւն  
 ձեռք ձգած բռնակալի պէս դարձաւ  
 Իլլով՝ Աւրբանոս Բ, պապին շնորհիւր:

(\*) «Անդ ևս անիրաւ եզվայիգայքն ներհա-  
 «կացան Հայոց, և ձախեցին զբանս նոցա, որ  
 «ոչ եղև տուեալ եկեղեցին Հայոց. զոր և ու-  
 «նայն դարձան ողորմելի ժողովուրդքն, և եկին  
 «ՏԻԼՎՈՎ» : ԱՄՄ. ԻԸ :

Ժ.

Այնուհետեւ Նիկոլ սկսաւ առաջինէն  
 աւելի համարձակ առաջ տանել իւր ան-  
 խիղճ անիրաւութիւնները: Արովհետեւ  
 ազգին ու ժողովրդեանը գէմ կռուրտե-  
 լու համար շատ փողէ ելել էր, գրաւած  
 եկեղեցիներուն մէջ ինչ որ գտաւ՝ աժան  
 աժան ծախեց Հրեաներուն գաղտուկ:  
 Իմացան Հայերը, բողոքեցին նորէն թա-  
 գաւորին, պապին, Աթոռղիկոսին, բայց  
 մտիկ անող չգտնուեցաւ. թագաւորը  
 կզգուշանար եկեղեցական կռուոյ մէջ  
 մտնելէն, պապը կ'ախնար որ մի գուցէ  
 Նիկոլին անիրաւութիւնները յանդիմա-  
 նելով՝ Հայերը կ'աթուղիկ անելու յոյսէն  
 զուրկ մնայ. Աթոռղիկոսն, որ էր ե-  
 րանելին եւ անմահ յիշատակաց ար-  
 ժանին Փիլիպպոս, մինչեւ որ լսեց ու  
 հասկացաւ եղածները եւ գարման անե-  
 լու աշխատեցաւ, խեղճ ժողովրդեան

վերայ վհատութիւնն ու յուսահատու-  
թիւնը տիրեցին:

Վերջապէս ելան գնացին Հայերը՝ Նի-  
կոլ բռնաւորին ոտքն ընկան, կաղա-  
չէին կպաղատէին որ խնայէ իրենց, ե-  
կեղեցիներէն մինչեւ իսպառ զուրկ եւ  
անմխիթար չթողաւ: Բայց Նիկոլ մտիկ  
չարաւ ամենեւին. «Նթէ դուք եւս ին-  
«ձի պէս հռոմէական կաթոլիկ լինիք,  
«ասաց, եկեղեցիները բաց են ձեր առ-  
«ջեւ. ապա թէ ոչ, ես զձեզ չեմ ճա-  
«նաչեր, ձեր առջեւ իմ եկեղեցիներս  
«չեմ բանար, ո՛ւր որ կուղէք՝ գնացէք,  
«ինչ որ կրնաք՝ արէք»: Չէին հաս-  
կանար խեղճ Հայերը՝ թէ Նիկոլ ի՞նչ  
իրաւամբ կպահանջէր որ իւրեանց հայ-  
րենի դաւանանքը մէկգի ձգեն եւ օ-  
տար ազգաց դաւանութիւնն ընդունին:  
Գիտէին ու կտեսնէին որ այն օտար երկ-  
րին մէջ՝ միայն իւրեանց կրօնական  
պաշտամունքներովն է որ ազգութիւնը

պահել ենք ի նոցանէ եւ կենան իրենք  
 ղիրենք սպաննելու պէս յանցանք կհա-  
 մարէին, եւ իրաւունք ունէին. բայց ո-  
 բն հասկացնէին այն իրաւունքը: Տի-  
 բեց նոցա վերայ դառն տրամութիւն  
 եւ յուսահատութիւն. տուն չկար որ  
 որքն ու լացը մէջէն պահաս լինէր: Նոր  
 ծնած տղայքը երեք չորս տարիէ իվեր  
 անկնունք մնացել էին, մկրտող չկար,  
 մեռելները ժամ տանող նոցա վերայ  
 աղօթք անող չկար. հարսերն ու փեսա-  
 ները պսակող չկար. վասն զի անօրէ-  
 նքն Նիկիոյ այս բաներուս հրաման տալ  
 չէր կամենար: Աթէ սմանց հրաման եւս  
 տար մկրտութիւն կամ պսակ անելու,  
 եւ կամ մեռելները թաղելու, երեք չորս  
 հազար դահեկան չառած. հրամանը չէր  
 տար. ուստի շատ տղայք առանց մկրտու-  
 թեան մեռան, շատն եւս առանց մկրտու-  
 թեան մնացին մինչեւ տասնըվեց տարի,  
 Ոմանք ուրիշ քաղաքներ կերթային եւ

իւրեանց տղայքը այնտեղ մկրտել կու-  
տային, պսակներն եւս այնտեղ կկատա-  
րէին. բայց նորէն Նրիտլ չդառնալը  
աչքերն առած պիտի լինէին, վասն զի  
ճանր ճանր տուգանքներու տակ կձգէր  
զիրենք Նիկոլ :

Կպատմէ Առաքեալ վարդապետը թէ  
անգամ մի երիտասարդին մէկը պսա-  
կուելու կլինի: Հարսնիքին տէրերն այն  
պսակը եպիսկոպոսէն ծածուկ օրհնել  
տալ ուղելով, երէք քահանայ կրեւեն  
որ տան մէջ կատարեն պսակը: Նիկոլ  
կիմանայ, խկոյն զինուորներ կյուղար-  
կէ որ թէ քահանաներն եւ թէ հարս-  
նիքի տէրերն բռնեն, բանա գնեն: Նա-  
քասարտօտիւս՝ կըսկսին ծակէծակ մըտ-  
նել, վախշրակ, պահուրտիլ: Քահա-  
նաներէն մէկը մէկ սնտուկի մէջ կը  
մտնէ, վերայէն կկըզպեն, միւս երկու-  
քը տանը վառարանին ( սօպային ) մէջ  
կպահուրտին: Զինուորները կմանեն

տունը, ասդիս անդին մարդ փնտռելու  
 ժամանակ՝ այն երկու քահանաները կը  
 գտնեն կհանեն վառարանին մէջէն՝  
 բոլորովին մրոտած սեւցած երեսներով,  
 — «դի մուր սօսային սեւացուցեալ էր  
 զնոսա՝ կասէ Առաքել. ձեռքերը ե-  
 տեւները կկապեն, եւ այնպէս գլուխ-  
 ները բաց՝ ոտքերը բոբիկ՝ կառնուն կը  
 տանին եպիսկոպոսին առջեւ: Իսկ նա  
 շատ անարգական ու սպառնալից խօս-  
 քերով խեղճերուն թուք ու մուր տա-  
 լէն յետոյ՝ թէ զանոնք եւ թէ հարսնի-  
 քին տէրերը բանտ կդնէ. քահանանե-  
 րէն կառնու չորս հարիւր դահեկան,  
 հարսնեւորներէն չորս հարիւր, եւ այն-  
 պէս հրաման կուտայ որ երթան անեն  
 իրենց հարսնիքը: Ի՞նչ ողորմելի հարս-  
 նիք, — Իսկ մեռելներուն թաղման հա-  
 մար ուրիշ ճար չէր մնացած. ամեն  
 մարդ իւր մեռելը փայտէ սնտուկի մէջ  
 կդնէր, նորա վերայ կլեցընէր հալած

ձիւթ ու գուրս տեղ կթողուր տարի-  
ներով: Շատ մարդիկ չդիմացան այն  
խեղճութիւններուն, առին իւրեանց  
ստացուածքը՝ ուրիշ քաղաքներ գնա-  
ցին ու միւսանգամ չդարձան. արեղա-  
ներէն ու քահանաներէն եւս ոմանք  
Էջմիածին գնացին եւ այնտեղ մնացին:  
Փիլիպպոս Աթոռղիկոս ի նոցանէ մէկը  
եպիսկոպոս ձեռնադրեց ու Նլլով յու-  
ղարկեց որ իբր թէ ժողովրդեան տա-  
ռապանացը դարման տանի. բայց Նի-  
կոլ եղութներուն օգնութեամբը դէմ  
կեցաւ, թող չտուաւ որ նա եկեղեցիէն  
ներս ոտք կոխէ:

Քա՛ն լիցի որ մեք կրօնական խնդրոց  
համար հալածանք հանողներուն բռ-  
նած ճամբուն հաւնիմք, ինչ ազգէ եւս  
լինին, ինչ հաւատքի եւ դաւանութեան  
տէր եւս լինին, սակայն հալածանք հա-  
լածանքի հետ բաղդատել կամեցողնե-  
րուն, եւ ասկից քառասուն ասրի ա-

և արջ նոյնպէս մեր արգիւն մէջ սլանա-  
 ճած հայաժամերը անօրինակ բանի պէս  
 յիշատակողներուն կհարցնենք՝ թէ ար-  
 դեօք Նիկոլին ու եղբւրիքներուն ընդ  
 դէմ Հայոց հանած հայաժամերին նմա-  
 նը երբ տեսնուած է . . . Պօլսոյ հա-  
 լածանքները ո՛վ որ պարզ կրօնական  
 հայաժամերի տեղ գնէ՝ շատ կրտսայի  
 վասն զի գիտցողները գիտեն՝ թէ նոցա  
 բուն պատճառ՝ մասնաւոր մարդկանց  
 անձնական կիրքերն ու քաղաքական  
 թշնամութիւններն էին, իսկ Նիկոլին  
 հանած հայաժամերը փառատիրութեամբ  
 սկսաւ, յետոյ Հայերը բռնութեամբ կա-  
 թոյիկ անելով վերջացաւ. ուստի ար-  
 ժանապէս կրօնական հայաժամք պիտի  
 համարուի՝ յամօթ եւ ի նախատինս  
 կաթոլիկութեան, եւ զայն այս կերպով  
 պաշտպանող մոլեհախանձ կեղծաւո-  
 րաց։



ԺԱ.

Հայաստանեայց եկեղեցւոյն մէջ խը-  
ւտութիւն սերմանող լատին քարոզ-  
չաց մէջ անուանի էր այն ժամանակ-  
ները, այս ինքն 1637 ին, Պօղոս Փիր-  
մալի կամ Փիրոմալ անուանով Կաթողիկոս  
Պոմինիկեան կրօնաւորը, որ կասուի  
նաեւ Պօղոս Սիգերնացի, թեթեւամիտ  
ու յանդուգն մարդ, ինչպէս յայտնի  
է գրուածքներէն ու գործսցուածիւն-  
ներէն \*) : Սա Հայաստան գնացել էր

(\*) Այս բախտախնդիր երանգէն և կրօն-  
քան թէ արդէն ասուելու արժանի քահանա-  
յին բնաւորութիւնը փոքր իշատէ կհասկացուի  
նաեւ հետագայ արտավիպէն Տաճկաստան ևն Աւս-  
րոպայ դասնալէն յետոյ՝ իւր միամիտ հայրենա-  
կիցներէն մէկը բազմութեան մէջ կհարցնէ Փի-  
րոմալին՝ թէ « Հայր այքան ժամանակ որ Տաճ-  
կաստան եւ Պարսկաստան քաղեցիր ու քարոզե-  
ցիր արդեօք սրբան մահմետականներ զարծի

1631 ին, Մովսէս Կաթողիկոսին հետ  
տեսնուելով ու նորա բերնէն քանի մի  
յարգութեան խօսքեր առնելով՝ Հռով-  
մայ սլապին համար, միտքը դրել էր թէ  
Հայերը կաթողիկ պիտի անէ. կաթող-  
ղիկոսին ձեռքէն թուղթ եւս առաւ առ  
սլապն եւ գնաց Նախջուան, «նիւս»  
կոչուած լատինահայոց սլատմեց. Նո-  
քա, որ այն ժամանակին հասնեաները  
կամ Կոլէճցի հայերը կրնային համա-  
րուիլ, մտքերն դրած էին՝ թէ Հայք  
հերետիկոս ու հերձուածող են, —  
ուստի այնպիսի թեթեւ քաղաքաւա-  
րական խօսքերով շուտ կաթողիկ չեն

---

մերիք, քրիստոնեայ արիք, « Փիրոմալը ի՞նչ  
պատասխան տայ. « Մահմետականները քրիս-  
տոնեայ անե՞լ, կասէ՛ աչքերը աւելի բանալով.  
մարդ Աստուծոյ գոհ չե՞ս որ ես մահմետական  
չդարձայ, « Գուցէ կինացը մէջ քիչ անգամ  
պատահած էր խեղճին այսպիսի անկեղծ խօստո-  
վանութիւն անել.

կարող լինել, Հռովմայ եկեղեցւոյն հետ  
չեն միաբանիր, եւ նոցա միաբան ևմք  
ասելն ամենեւին բանի չի գար, — այն-  
չափ խօսք խառնեցին, այնչափ շփո-  
թութիւն ձգեցին ազգին մէջ որ բանը  
Նախջուանի այլազգի իշխանին ականջը  
հասաւ, եւ նա բռնեց ֆռանկ քահա-  
նան բանա դրաւ՝ իբրեւ լրտես եւ խը-  
ռովարար: Նա աշխատեցաւ Աաթու-  
ղիկոսն որ ազատէ զինքը բանտէն, ճար  
չեղաւ. վասն զի զինքը մատնողները՝  
իւր կրօնակից Գոմինիկեաններն էին:

Աերջապէս երկու տարիէն հազիւ  
ազատեցաւ Փիրոմայը բանտէն, գնաց  
Էջմիածին, շատ սիրով ընդունելու-  
թիւն գտաւ Փիլիպպոս Աաթուղիկոսէն,  
եւ այնտեղ տրամաբանութիւն դաս  
կուտար աշակերտաց: Իսկզբան՝ չափա-  
դանց եռանդով սկսաւ վիճել միաբան-  
ներուն հետ՝ թէ Հռովմայ եկեղեցւոյն  
ու Հայոց դաւանանքին մէջ Գարբէր—

Ռէն շէյ արեւելի. միտքը այն էր որ այս  
 ասելով՝ զՀայերը Հռովմէական դար-  
 ձընէ: Բայց խոհական Աաթուղիկոսը  
 լաւ հասկացուց տրամաբանութեան ան-  
 տրամաբան վարժապետին՝ թէ նորա  
 արած դատողութիւնը ծուռ է. «Մեր  
 «արդէն այդպէս գիտէինք՝ ասաց Աա-  
 «թուղիկոսը՝ այժմ՝ որ դուն եւս այդ-  
 «պէս հասկացար՝ ինչո՞ւ համար ըն-  
 «դունայն վէճերու հետ կլինիս ու շը-  
 «փոթութիւն կձգես վանքին մէջ»:  
 Արշալի հարկաւոր էր այս խրատը նաեւ  
 մեր ժամանակի Հայ եւ լատին քարո-  
 ղիչներուն՝ որ յերկուս հետս կրկաղան:

Հասկացաւ Փիրումալն որ Աաթուղի-  
 կոսը իրաւունք ունի՝ եւ ձայնը քաշեց՝  
 գէթ առ ժամանակ մի. եւ որովհետեւ  
 այն միջոցներումն էջմիածին ու Երե-  
 ւան ոտնակոխ եղան պատերազմող զօր-  
 քերէ՝ եւ վանքին միաբաններն ասդիս  
 անդին ցրուեցան: Փիրումալը քարոզու-

Թիւն կանէր Հայաստանի ուրիշ գեղերն  
 ու քաղաքները՝ առանց կրօնական վե-  
 ճեր գրգռելու: Պօլիս եւս գնաց, եւ  
 Վուսաւորչայ եկեղեցւոյն մէջ քարոզ  
 կուտար՝ Փիլիպպոս կաթողիկոսէն ա-  
 ռած իշխանութեանը համեմատ. բայց  
 որովհետեւ լատին էր ազգաւ եւ օրտով,  
 միշտ կաշխատէր որ Հայերը Հռովմայ  
 աթոռոյն հնազանդեցընէ, եւ այն պատ-  
 ճառաւ պապին ու Փրոփականտացի ժո-  
 ղովոյն առաջ մեծ պատիւ ունէր: Նո-  
 րա փոքր իշատէ նմանութիւն ունեցող  
 մարդիկ այս օրուան օրս եւս գտնելը  
 դժուար չէ:

Այս Պօղոս Փիրոմալին գրեց Ուրբա-  
 նոս Բ պապը, կամ թէ պապին կող-  
 մանէ Փրոփականտայի ժողովը, որ եր-  
 թայ լեհաստան, եւ ժողովուրդը Նի-  
 կոլին հետ հաշտեցընէ. ասել կլինէր  
 թէ համոզէ ժողովուրդը որ հնազան-  
 դին Նիկոլին. ինչպէս որ աստի քսան

տարիի չափ առաջ կաւտէ անունով Գոմինիկեան Իտալացիին եւս Պօլիս յուզարկուեցաւ այժմու պատէն՝ որ Գերշասունեանը իւր ժողովրդեանը հետ հաշտեցընէ, եւ յետոյ նոյն Պիոս Թպապը յուզարկեց նոյն մայրաքաղաքը՝ նոյն նպատակով՝ Գերփլէճ եպիսկոպոսը:

Նոյն յանձնարարութիւնն արած էր արդէն Փիրոմալին Փիլիպպոս կաթողիկոսը՝ նորա Եջմիածնէն ելած ժամանակը. կկարծէր բարեսիրտ կաթողիկոսն որ Նիկոլին յայտնի անզգամութիւնը վերջապէս պիտի դադրի եւ ժողովրդեան անմեղութիւնը յաղթանակ պիտի կանգնէ: Նոյնպէս կարծեց բարեմտութեամբ նաեւ Պօլսոյ ժողովուրդը՝ երբ Փիրոմալը Նուսաւորչայ եկեղեցւոյն մէջ քարոզելով իմացուց թէ ինչ պատճառաւ ինքը Իլլով պիտի երթայ, եւ ուրախացաւ:

Փիրոմալին ինչ մտքով Լեհաստան  
դառնալն աւելի լաւ հասկացաւ Լեհաց  
Թագաւորը. ուստի իւր խորհրդական-  
ներէն չորս հոգի յուղարկեց նորա առ-  
ջեւն որ հարցնեն թէ ի՞նչ պատճառաւ  
եկել է: Երբ պատասխան տուաւ Փիրո-  
մալը՝ թէ պապին հրամանաւը եկել է՝  
Հայոց մէջ հաշտութիւն անելու, ասա-  
ցին խորհրդականները. «Եթէ Նիկոլին  
կողմը բռնես, բան չես կարող շահիլ,  
վասն զի իրաւունքը ժողովրդեանն է,  
եւ սկսան մի առ մի առաջը դնել ժո-  
ղովրդեան իրաւունքները: Փիրոմալ նա-  
յեցաւ որ խորհրդականները ամենեւին  
իրաւունք տալ չեն ուզեր Նիկոլին, եւ  
ոչ ժողովուրդը նորա կամացը խոնար-  
հեցընել՝ կաթուղիութիւնը յանձն առ-  
նելու, դարձաւ ասաց նոցա՝ թէ «Սյդ-  
ձեր բռնած ճանապարհը հաշտութիւն  
անելու ճանապարհ չէ»: Հարցուցին  
խորհրդականները՝ թէ «Հապա դուն

ի՞նչ ճանապարհ պիտի բռնես որ այդ բանդ յաջողի : — Թագաւորին միայն կասեմ՝ պատասխանեց Փիրումալ : Յայտնի բան է որ պապին կողմանէ հրաման ունէր այս եւ այն պահանջմունքները անելու ժողովրդէն, — որոց իսկութիւնը կամ գլխաւորն էր՝ կաթոլիկ դառնալը, — եւ անով անել հաշտութիւնը : Այսպէս եղած են միշտ պապին եւ սպաականաց ամեն տեղ արած միջնորդութիւնները, որով հաշտութիւնն ու խաղաղութիւնը մօտենալու տեղ՝ աւելի եւս հեռացած է ամեն ժամանակ :

Փիրումալը թագաւորին առջեւն ելաւ ու պապին հրամանագիրը ցուցուց, եւ յետ երկար խօսակցութեանց՝ հրաման ընդունեցաւ որ երթայ Հայոց եկեղեցին, այնտեղ ժողովէ Հայերը ու յայտնէ նոցա իւր միտքը : Քնաց խօսեցաւ, ոչ թէ խեղճ ժողովրդեան անկապտելի իրաւանցը վերայ՝ զոր Նիկոլ յափշտակել



ու ոտքի տակ առել էր, այլ կաթովի-  
կութեան նշան համարեալ հաւատոյ  
մասանց վերայ: Կուզէր որ Հայերը Քաղ-  
կեդոնի ժողովը իբրեւ «—ըէ Ժ—ը» ըն-  
դունին, եւ Քրիստոսի Տեառն մերոյ  
աստուածային եւ մարդկային բնու-  
թիւն ունենալն՝ բոլորովին ըստ լատի-  
նացւոց դաւանին: Անխիղճ քարոզիչը  
չէր մտածէր որ իւր արած վարդապե-  
տութիւնը եթէ ճշմարտութիւն եւս  
լինէր՝ այնպիսի խնդիր էր որ խորին  
աստուածաբաններն անգամ առանց  
երկար բացատրութեանց չեն կարող ի-  
բարու գէթ փոքր իշատէ հասկացնել,  
թող թէ խեղճ աշխարհական անհովիւ  
ժողովուրդը. չէր մտածէր կասեմ, վա-  
սըն զի չէր կամենար որ իւր խօսքին  
դէմ կեցող գտնուի:

Պատասխան տուաւ ժողովուրդը թէ՛  
«Մեք երեք առաջին ժողովները միայն  
«կճանաչեմք», եւ նոցա վարդապետու-

« Թեանը կհետեւիմք. չորրորդ, այս ին-  
 « քըն Քաղկեդոնի ժողովը՝ չեմք ճանա-  
 « չեր. բայց եթէ նորա վարդապետու-  
 « թիւնն եւս առաջիններուն վարդա-  
 « պետութեանը նման, եւ ըստ ամենայ-  
 « նի համեմատ է, զայն եւս չեմք մեր-  
 « ժեր: ԶՔրիստոս հապարեալ Աստուած  
 « եւ հապարեալ Տարդ կղաւանիմք, բայց  
 « երկուքնս ասելէն կզգուշանամք՝  
 « որ երկուքնս չհասկացուի: Իսկ Գէ-  
 « ոսկորոսը արդէն մեր երգերուն մէջ  
 « չեմք յիշեր, վասն զի մեր Հոգեւոր  
 « Տէր Մովսէս Աթոռղիկոսն եւս պա-  
 « տուիրա՞ծ է մեզ որ նորա յիշատակու-  
 « թիւնը չանեմք » :

Այսպիսի բացատրութիւններ լսելէն  
 յետոյ՝ կերեւի որ եթէ Փիրոմալին մը-  
 նար՝ այնչափով գոհ պիտի լինէր. սակայն  
 Նիկոլ չէր կրնար գոհ լինել, կուզէր որ  
 ժողովուրդը բոլորովին եւ ամեն բանի  
 մէջ իւր կամացը խոնարհի: Նոր ապա-

ցոյց եւ հերքումն սնտոի յուսոյ այն  
 Հայոց՝ որ կարծեն թէ Հռովմայ աթո-  
 ռոյն եւ հռովմէականաց հետ կարելի  
 է միաբանիլ՝ առանց ազգային իրա-  
 ւունքները կորսընելու. պիտի գիտնա՞ն  
 այնպիսիներն որ ինչպէս սուրբ հաւա-  
 տոյ մասունքը անփոփոխելի են, այսպէս  
 եւս հռովմէականք դրած են մտքերն  
 թէ իւրեանց պահանջմունքներն մէկ  
 մէկ հաւատոյ մասանց պէս անհրա-  
 ժեշտ հարկաւորութեամբ հարկաւոր  
 են ~~առաջադրու~~ ասուելու համար: Հաւա-  
 տոյ մասանց մէջ մոլորութիւն չունիմ  
 կասես, ու յայտնապէս կը ցուցընես.  
 այն բաւական չէ, պէտք է որ պապին  
 եւս հաւատաս: Այն բաւական չէ, ազ-  
 գային եկեղեցիէդ պիտի բաժնուիս,  
 ազգիդ սեպհական առաջնորդներէն  
 պիտի աստատամբիս եւ օտարին հնազան-  
 դիս, որպէս զի ուղղափառ ճանչցուիս:  
 Գուցէ պապին մեծ հայրապետ, եւ օրի-

նաւոր յաջորդ Պետրոսի եղածը կճանաչես, այն բաւական չէ. պէտք է զինքը ճանաչես նաեւ միմիայն գլուխ եկեղեցւոյ եւ հրամանատար ամենայն պատրիարքաց:

Հասկացան այս բանս նաեւ Իլլիովցիք, ու չխոնարհեցան Նիկոլին. եւ այնչափ իրաւունք ունէին՝ որ Փիրոմալն եւս չը կրցաւ զնոսա բռնադատել. ընդհակառակն, ելաւ Հռոմ գնաց ու հասկացուց պապին ժողովրդեան իրաւունքները եւ Նիկոլին անիրաւութիւնները:

Սորա հաստատութիւնն ունիմք նաեւ Իլլիովի օրագրին մէջ, որ Բժշկեան Հ. Մինաս վարդապետը օրինակած ու իւր ճանապարհորդութեանը մէջ տպած է, Հայու գրով թաթարերէն այսպէս.  
 « 1639, Յունիս 2 էանիկէ 4ը ( 4ալէնդար ).  
 « — Բարսի Բարսել քօթիկէ 4ան Տիկի պիլա  
 « քառանութիւն վերինքան Բօթալար էր-  
 « քիկի. Խայսէ քառանութիւնն 4ան պի-

« յանընթ աս Բօթաբնասացցաս ասպօլարս, զէղ-  
 « նար երեթ թե ետիշե թաթօլեթլարարըր, աս  
 « ետաղարի ժարիշահիս, աս Մ. Պ. Էնաս (տի-  
 « պանիան), հե՛՛մ լեկարթաս աս անկլարըթ թե  
 « պիղի՛մ անիթաս Նեկօլ անթաս շպիլի ետ-  
 « ճանաս նեյցնօրլիվեյ անկլարըլ երե, թե  
 « պիղ իե-երեթլար պօլիայ պիղ, օլ վեղրան  
 « թե պիլի թօղրան շխարհայ : » Ա. յս ինքն,  
 « 1639, Յուլիս 2 ըստ նոր տոմարի —  
 « Հայր Պօղոս դամնիկեան կրօնաւորին  
 « հետ դաւանութեան վերայ խօսեցանք  
 « ու հասկացուցինք. նա մեր դաւանու-  
 « թեանը հաւնելով ստորագրութիւն  
 « ալ տուաւ, վկայելով որ սոքա լաւ հա-  
 « թուի (ուղղափառ) են. դրեց նաեւ  
 « թագաւորին ու արքեպիսկոպոսին. լե-  
 « կաթին (այս ինքն Պապի նուիրակին)  
 « եւս հասկացուց որ մեր անիծած Նի-  
 « կոլ եպիսկոպոսը զմեզ չարութեամբ  
 « վատահամբաւ կանէ, ասելով թէ՛ մեր

« հերետիկոս եմք, որպէս զի զմեզ աչքէ  
 « հանէ: »

Մինչդեռ պապը կամօած էր որ նորէն  
 Ելլով դարձրնէ Փիրումալն՝ որ հաշտու-  
 թեան հնարք գտնէ ու ժողովրդեան  
 խնդիրը կատարուի, Նիկոլ անձամբ հա-  
 սաւ Հռովմ, ու եզուիթներուն օգնա-  
 կանութեամբը արգելք եղաւ հաշտու-  
 թեան եւ խաղաղութեան, այնպէս որ  
 Փիրումալն Ելլով որ դարձաւ՝ բան չկա-  
 րողացաւ անել, ելաւ գնաց նորէն Հայ-  
 աստան 1642 ին: Իսկ խեղճ ժողովուր-  
 դըն նոյնպիսի անտանելի հալածան-  
 քի չդիմանալով, եւ խաբերայ մարդ-  
 կանց սուտ խոսամուկներէն ձանձրա-  
 ցած լինելով, սկսաւ հետզհետէ աւելի  
 եւս ցրուիլ Ելլովէն ու շրջակայ դա-  
 ւառներն ու քաղաքները երթալ բը-  
 նակիլ աղքատութեամբ ու տրամու-  
 թեամբ. այնպէս որ յիսուն հազարէն  
 հինգ հազար հոգի հազիւ մնացին Ել-

վույի մէջ ու մօտերը, եւ նորա եւս կու-  
գէին ելլել երթալ \*):

Այն ժամանակ հասկացաւ Նիկոլ որ  
արածը վատ էր, այս ինքն հասկացաւ

(\*) Լսելու արժանի բան է թէ ինչ կերպով  
կհամառօտէ այս անցքերը բարեսիրտ և ճշմար-  
տասօս Առաքել պատմիչը. — խօսքերուն մէջ  
աւելի դիտողութեան արժանաւոր բառերը կընտ-  
րեմք. «Այլ և ի սոյն ժամանակի ի կարգէն Գո-  
«մինիկոսի Պօղոս անուամբ վարդապետ ոմն, ոչ  
«իստուծոյն և երեւելի յազգէն Փռանկաց, եկն  
«յերկիրն Նախջուանայ ի մէջ երեսնայնոցն (ու-  
«նիթոռաց) որք անդ կան, և Փիլիպպոս Սա-  
«թուղիկոսն բազում սէր և բարեկամութիւն  
«արար ընդ Պօղոսին այն՝ զան զբոլ յարեւելսն  
«Երոյ և իրիւնսն եկեղեցոյն և զայ: Եւ Պօ-  
«ղոսն այն յետ կատարման գործոյ իւրոյ կամե-  
«ցաւ զնալ ի Հռօմ, և զնալով զճանապարհս  
«իւր հանդիպեցաւ ի Լով քաղաք, և Լովացիք  
«ևս բազում աղաչանօք խնդրեցին ի Պօղոսէ և  
«բազում մեծարանս արարին նմա, և գնալս  
«նա հուլիս առ ի թոշակ ճանապարհին երեսն

որ իւր փառասիրութեանն ու շահասիրութեանը վախճանին չհասաւ . կորսընցուց ժողովուրդս կաթոլիկ արի անելուն պարծանքը՝ միանգամայն նոցա հարըստութիւնը քաղելու եւ արիւնը խմելու յոյսը . սկսաւ կեղծաւորութեամբ հաշ-

«...» զի թերեւ զօգնութիւն ինչ հնարեսցէ  
 «նոցա ի դուռն Փափին» Եւ յորժամ եհաս  
 «Պօղոս ի Հոօմ», և մինչ նա զբանս ինչ բարե-  
 «խօսութեան վասն Հայոց առաջարկեալ էր, և  
 «խօսէր ի դուռն Փափին, վաղվաղակի գնաց  
 «զկնի նորա և Նիկօշ եպիսկոպոսն ի Հոօմ ի  
 «դուռն Փափին, և խափանեաց զօգնութիւնն  
 «Պօղոսի յեռնորդսն ի Նիկօշ: Եւ այս-  
 «պէս յամենայն կողմանց խափանեցաւ փրկու-  
 «թիւն և օգնութիւն տառապեալ ժողովրդեան  
 «Լուվայ քաղաքին, և ընդ Պօղոսին գնացողքն  
 «տրտում և ունայն դարձան անտի:

«Եւ Նիկօշ եպիսկոպոսն ևս դարձաւ ի Հոօ-  
 «մայ և եկն ի Լուվ քաղաք, և կեայր ըստ ա-  
 «ռաջնոց վարուց իւրոց, և ևս առաւել անա-  
 «ռակ, և զվերոյ ասացեալ զրեանսն և զսրբու-



տու թեան ետեւէ ընկնիլ, բայց խօս-  
քին մտիկ անող չգտնուեցաւ. որով եւ  
ինքն օրէ օր աղքատացաւ, եւ ամենուն  
երեսէն ընկած՝ ինչ անելիքը չէր գի-  
տեր:

ԺԲ.

Տասը տարի այս կերպով անցնելէն  
յետոյ, լսեց Նիկող 1652 ին՝ թէ Փիլիպ-

---

« թեան անօթան և զամենայն աւանդս եկեղե-  
« ցւոյն՝ զորս վաճառեաց և զորս կաշառս բաշ-  
« խեաց, և զորս ձեռամբ չրէից խորտակեալ  
« արար արծաթ և վաճառեաց, և զայնքան  
« զբազում և զանթուելի ինչսն և զգանձսն  
« ցիր և ցան արարեալ բնախն վատնեաց, որ  
« ոչինչ մնաց, միայն լոկ դատարկ քարեայ եկե-  
« ղեցին. զի կեայր անառակ և զեղիս և շուայ-  
« տոս վարուք յայանի և համարձակ՝ յոչ ու-  
« մեքէ վեհերելով. Եւ բազում զրեանք և ա-  
« նօթք ի նորին վաճառելոցն եկին յերկիր՝ Հոյոյ  
« և ու մեզ հոյն, զորս վաճառականք զնով  
« առեալ բերին, որ ասելիք էր արեւելոցն. » . Ի՛նչ:

պոս Կաթուղիկոսը Երուսաղէմ գնացել  
 եւ անկից Պօլիս եկել է, մտածեց որ  
 ինքն եւս այնտեղ երթայ, Կաթուղիկո-  
 սին ընկնի՝ որպէս զի այս բաներուս  
 մէկ ճարը գտնուի: Այն օրերը Եւդո-  
 կիայէն մահտեսի Մարկոսի որդի Սիմոն  
 անունով լիաճառական մի եկած էր Ել-  
 վով. սա Նիկոլին ինչ մարդ լինելը չը-  
 գիտնալով՝ հաւատաց նորա խօսքին  
 ու հանեց երկու հազար դահեկան  
 տուաւ որ կարենայ այն ճանապարհոր-  
 դութիւնն անել: Ելլովցիք Նիկոլին դի-  
 տաւորութիւնը հասկացան՝ իրենք եւս  
 դատաւորներէն Խաչիօ անունով մէկը  
 յուզարկեցին Փիլիպպոս Կաթուղիկո-  
 սին. եւ նա գնաց Նիկոլին գնալէն ա-  
 ռաջ ամեն բան պատմեց հասկացուց  
 նորա, եւ ժողովրդեան խնդիրքը իմա-  
 ցուց որ սոքա էին:

Ա, Նիկոլ սուրբ Լուսաւորչին եւ նո-  
 րա յաջորդող Հայրասլետաց, եւս եւ

նորա հետեւողաց՝ եկեղեցականաց եւ աշխարհականաց դաւանանքը խոստովանի եւ դաւանի:

Բ, Հայաստանեայց եկեղեցւոյ ծէսերը՝ տօները, պատարագի եւ ուրիշ պաշտամանց կարգերը պահէ եւ չփոխէ:

Գ, Նիկոյին վախճանելէն յետոյ՝ նորա տեղը եպիսկոպոս նստողը Էջմիածնայ Կաթողիկոսէն ձեռնադրուած լինի եպիսկոպոս, նորա հրամանովը այն վիճակին առաջնորդ հաստատուի, եւ նոյն Կաթողիկոսին հնազանդ եւ հետեւող մնայ:

Դ, Սուրբ պատարագի բաժակին մէջ ջուր չխառնէ:

Ե, Եկեղեցականները, թէ՛ եպիսկոպոս՝ թէ՛ քահանայ՝ թէ՛ սարկաւազ, բնաւ չյիշատակեն պապին անունը: Նոյնպէս եւ Նիկոյէն յետոյ նորա տեղը նստող եպիսկոպոսը չյիշատակէ ամենեւին պա-

պին անուներ, այլ Բայն Նիկոլ, եւ այն  
պատարագին մէջ միայն:

Տարակոյս չկայ որ այս պայմաններն  
ու զգուշութիւնները մեծ խոհեմու-  
թեամբ եւ հեռատես իմաստութեամբ  
գրաւ Փիլիպպոս Աթուղիկոսը, վասն  
զի լաւ հասկացած էր՝ թէ պապին եւ  
պապականաց հետ պայմանագրութեան  
մոտեւ կամ ամենեւին չլինիր, եւ կամ՝  
եթէ հարկը պահանջէ՝ ամենեւին այն-  
պիսի զիջողութիւն պէտք չէ անել նո-  
ցա, վասն զի որքան որ տաս՝ միշտ ա-  
ւելին կպահանջեն, եւ անմեղ ու ան-  
վնաս մէկ խօսքէ մեծամեծ հետեւանք-  
ներ կհանեն: Այ՛ ապաքէն նոցա այս  
սկզբունքին հետեւանքն է՝ որով, օրի-  
նակի համար, Պետրոս առաքելոյն ա-  
նուանը Ք՛հ նշանակութիւնն ունենալէն  
շղթայի պէս օղակ օղակ հետեւանքներ  
իրարու անցընելով՝ բանը մինչեւ այն  
աստիճանի կհասցնեն, որ այսօրուան

օրս չեն ամաչեր անելու՝ թէ Պապը թ թ-  
 այն ժողովանորդ է Քրիստոսի՝ ի վերայ երկ-  
 րի. այլ եւ Ռաֆայել Ռաֆայելայ եւ հայոց  
 հայտերաց, անսխալ ժողովանորդ Աստուծոյ  
 եւ զրեթէ անասունք. հարցուր թէ ի՞նչ  
 պէտք է — դրեթէ այսպիսի տրամադրանու-  
 թեամբ. « Քրիստոս ասաց Աեարոսի, զո-  
 « ւտ վէճ. Պօղոս առաքեալը կանէ, վէճ  
 « էր ինքն Քրիստոս. ասա ուրեմն Աեարոս  
 « Քրիստոս է, եւ Քրիստոս Աեարոս, ո-  
 « րովհետեւ երկուքն եւս վէճ կատուին.  
 « Իսկ արդ Պապը յաջորդ է Աեարոսի,  
 « եւ նորա ամեն իշխանութիւններն ու  
 « յատկութիւններն ունի, ուրեմն Պա-  
 « պըն եւս է վէճ, Պապն եւս է Աեարոս,  
 « Պապն եւս է Քրիստոս: Իսկ արդ Քրիս-  
 « տոս թագաւոր է թագաւորաց եւ տէր  
 « տէրանց, ասա ուրեմն նաեւ պապն է  
 « թագաւոր թագաւորաց եւ ինքնակալ  
 « ինքնակալաց: Քրիստոս է Աստուած,  
 « եւ հարկաւ անսխալական, ասա ուրեմն

« օղապն եւս է գրեթէ աստուած (quasi  
 « Deus !!!) ուստի եւ իհարկէ անխալ. թող  
 « ինչ կամին ասեն տիեզերեկան ժողով-  
 « ները եւ ամենայն աշխարհ » : Մեր ե-  
 րանելի Կաթողիկոսին գովելի հեռա-  
 տեսութիւնը մինչեւ այն կտորին չհա-  
 սաւ որ գուշակէր՝ թէ Դայն՝ Նիկոլին  
 անգամ Պապին անունը յիշատակելու  
 հրաման տալը ամենամեծ վտանգի  
 պատճառ էր, պէտք չէր որ հրաման  
 տար նորա այդ բանին: Կասէ Առաքել  
 պատմիչը՝ թէ « Ասան յիշելոյ զանուն  
 « Փափին՝ Նիկոլն ինքն խնդրեաց ի Կա-  
 « թողիկոսէն՝ զի այնմ միայն ներումն  
 « արասցէ: Քանզի Նիկոլն ասաց՝ թէ  
 « յեռնագրաւն զար էս արուստ է՝ քառնկաց՝  
 « ի կարգէ լուծանեն զիս, գուցէ մա-  
 « հապարտ եւս առնիցեն. վասն այնո-  
 « րիկ ներեաց Կաթողիկոսն » : Եւ մեք  
 հարկադրեալ եմք ասելու՝ թէ շատ ա-  
 լելի լաւ կանէր՝ եթէ շէրէր ամենեւին,

այլ ասէր Նիկոլի. « Արովհետեւ դու  
 « ընդդէմ քու հաւատարմութեանդ առ  
 « եկեղեցիս Հայաստանեայց եւ առ Ա.  
 « թոռ սրբոյ Էջմիածնի՝ այնպիսի ա-  
 « պօրինաւոր եւ անվաւեր ձեռնագիր  
 « տուել ես ֆռանգաց, արժան եւ իրաւ  
 « է որ կամ այն ձեռնագիրն ետ առ-  
 « նուս եւ այնպէս յառաջ տանիս քու  
 « առաջնորդութիւնդ, եւ կամ ես իր-  
 « րեւ կաթուղիկոս՝ լուծանեմ զքեզ ե-  
 « պիսկոպոսական աստիճանէդ » : Իսկ  
 այն խօսքը թէ գոցէ հահապարպ եւս ու-  
 նիցեն շին ֆռանգին, ո՞չ ապաքէն սուտ էր  
 եւ սնտոի երկիւղ. ապա թէ ոչ, այս  
 ինքն եթէ ճշմարիտ լինէր, միթէ այն-  
 պիսի անիրաւ իշխանաւորաց պէտք էր  
 ձեռնագիր տար, կամ թէ տուածը օ-  
 րինաւոր էր :

Ինչ եւ իցէ, Նիկոլ այս չորս կամ  
 հինգ յօդուածները գիր անցուց, իւր  
 կնքովը կնքեց, ձեռնագրովը հաստատեց

եւ տուաւ կաթուղիկոսին, եւ կաթուղիկոսն յանձնեց Խաչիօ դատաւորին որ Երվով տանի, գիտնան Երվովցիք թէ ինչ խոստմունք արած է Նիկոլը Փիլիպպոս կաթուղիկոսին, եւ ըստ այնմ վարուին հետը: Յետոյ վերուց բանագրանքը Նիկոլի վերայէն, հաստատեց գրով նորա եպիսկոպոսական եւ առաջնորդական իշխանութիւնը, եւ խրատեց հայրաբար որ ետ կենայ իւր թափառական ու խէնէշ վարմունքէն, արդարութեան ճանապարհը դառնայ եւ եպիսկոպոսական անուան ու ատիճանին վայելուց ընթացք ունենայ: « Եւ նա հոգւով ջափ եւ յօժար կամօք յանձին կալեալ դամենայն հրամանս կաթուղիկոսին », ինչպէս կասէ պատմագիրը, դարձաւ Երվով:

Երվովի ժողովուրդը լաւ գիտնալով Նիկոլի ազգատեաց ու խառնութեան հոգին, ամենեւին չէր կարծէր որ Նիկոլ



այն պայմանները յանձն առնու, կամ պաշտօնին մէջ հաստատ մնայ. կյուսար թէ նորա տեղը կաթուղիկոսէն նոր առաջնորդ պիտի տրուի իրենց, եւ պիտի ազատին այն անգութ եւ անողորմ բռնաւորին ձեռքէն. Յայց խաբուեցան. չմտածեցին որ Նիկիոյի նման անխիղճ եւ անամօթ բռնակալները երբ մտքերն կդնեն եւ ուրիշներուն այնպէս կհասկացնեն՝ թէ իւրեանց արածն աստուածահաճոյ գործ է, սուտ խօսիլն եւ սուտ երգում անելն անգամ օրինաւոր կհամարին, միայն թէ իւրեանց նպատակին հասնին:

Գիտէր նաեւ Նիկիոյ՝ որ եթէ այն պայմաններն պահէ, պապին ու եղուիթներուն աչքէն պիտի ելնէ. Քայց որովհետեւ պահելու ամենեւին միտք չունէր, նայեցաւ որ ժողովրդեան աչքը խաբէ, նորա սանձը ձեռք ձգէ, այ-

նուհետեւ ուղածին պէս խաղայ հետերն\*):

ԺԳ.

Նիկոլ եւ Խաչկօ Իլլով որ դարձան, քաղաքացիք պատմել տուին Խաչկօյին ամեն բան, Նիկոլի գրաւոր խոստմունքն եւս տեսան, բայց ամենեւին չհաւատացին՝ թէ Նիկոլ այդ խոստմունքը պիտի կատարէ: Քանի որ կյիշէին նորա այնքան եկեղեցական հարստութիւնքը յափշտակելն ու փճացնելը, եւ իւրեանց տուած անտանելի նեղութիւնները, «Այրեալ խորովեալ տոչորէին սիրտք «նոցա, կասէ Առաքել, վասն այնորիկ «ոչ կամէին միաբանել ընդ նմա, նա «եւս առաւել փախչէին, եւ կամէին

---

(\*) Հարկ կհամարիմք ամբողջ զնել այս նշանաւոր անցքին պատմութիւնը՝ ինչ խօսքերով որ Առաքել վարդապետը կյիշատակէ:

« Եղով լինել ի նմանէ » . մանաւանդ որ  
 թէպէտ իսկզբան կարծեցին թէ նա  
 զղջումի եկած ու անպիտան վարմունքը  
 թողած է, բայց շուտով տեսան որ մի  
 եւ նոյն վարքը բռնած կերթայ անփո-  
 փոխ: Ուստի ոչ միայն հետը չեմք միա-  
 բանիր կասէին, հապա երեսն անգամ  
 չեմք ուզեր տեսնել:

Տէր Զաքարիա անունով աւագերէց  
 մի ունէին՝ որ Նիկոլին հետ լաւ էր,  
 նա եւս շատ յորդորեց ժողովուրդը որ  
 վերցնեն իւրեանց մէջէն այն խռովու-  
 թիւնը, ճար չեղաւ:

Վերջապէս Փիլիպպոս Ասթուղիկոս  
 յուղարկած էր Արղնցի Յովհաննէս վար-  
 գապետը, որ իւր աշակերաներէն մէկն  
 էր, իմաստուն ու խաղաղասէր մարդ,  
 որպէս զի զժողովուրդ հանգարտեցը-  
 նէ: Իլվովցիք առաջ նորա խօսքերուն  
 եւս մտիկ չարին՝ ասելով թէ « Նիկոլին  
 « ինչ մարդ լինելը չես գիտեր, Հայր

« սուրբ, ու Սրբազան Աթոռակիցիսին  
 « պէս գուն եւս կխարուխ. բայց մեր  
 « լաւ ճանաչացած եմք նորա կեղծաւո-  
 « րութիւնն ու անղգամութիւնը, չեմք  
 « ուղեր յայտնապէս խարուիլ »: Սակայն  
 բարեսիրտ վարդապետը այնչափ աշ-  
 խատեցաւ, այնչափ խրատներ՝ յորդո-  
 րանքներ արաւ որ ժողովրդեան բար-  
 կութիւնը իջեցուց, բերաններէն խօսք  
 առաւ որ հաշտուին Նիկոյի հետ:

Հետը առաւ զամենքը, Նիկոյ եպիս-  
 կոսոսն եւս ի միասին, եկեղեցւոյն գու-  
 ռը տարաւ բաղմութեամբ, դրանք առ-  
 ջեւ աղօթք անելէն յետոյ՝ դարձաւ  
 օրհնեց ժողովուրդը Սրբազան Աթոռ-  
 ակիցիսին կողմանէ, Նիկոյին աջը համ-  
 բուրեց, եկեղեցւոյն բանալիքն որ մին-  
 չեւ սոյն վայրկեանը իւր քովն էին՝ նո-  
 րա ձեռքը տուաւ որ ինքը բանայ, եւ  
 նա բացաւ ու մտաւ ներս: Նորա ետե-  
 ւէն խեղճ ժողովուրդը ոչխարներուն

իւրեանց փարախը հորդան տալուն նը-  
 ման վաղեց ներս թափեցաւ, ու սկսան  
 աղիոզորմ՝ արտասունքով եւ բարձրա-  
 ձայն աղաղակով լալ ողբալ՝ որ քսան ու  
 երեք տարի իւրեանց եկեղեցիէն զրը-  
 կուած մնալէն յետոյ՝ վերջապէս ար-  
 ժանի եղան մէջը մտնելու: Գեաթնը  
 համբուրելու ժամանակ՝ երեսներն քա-  
 բերուն կքրսէին ու տաք տաք արտա-  
 սունքով իւրեանց այն տեղը թաղուած  
 նախահարց տապանաքարերը կըթրջէ-  
 ին. աչքերն վեր վերցնելով՝ խորաններ  
 բուն խնկահատ պատկերացը նայած ժա-  
 մանակները՝ սրտերուն հալիլը արտ-  
 սունքներուն աղբերանալէն եւ աղեկէզ  
 հառաչանքներէն կհասկացուէր: Ա՛յ կը  
 մտածէր այն միջոցին՝ թէ այնպիսի ան-  
 հնարին աղետից պատճառ՝ փառամոլ  
 եպիսկոպոսի մի բռնութիւններն ու  
 անողամ եղութիւններու կեղծաւորու-  
 թիւններն էին. . . . ամեն մարդ այս

միայն կմտածէր որ իւր հայրը կամ մայրը, հօրեղբայրը կամ մօրաքոյրը, եղբայրը կամ զաւկընները, այն քսան ու երեք տարուան միջոցին վախճանելով՝ նոյն եկեղեցւոյն կարօտուիլը հալած աչքերն գոցեր էին. այս միայն կմտածէին որ վերջապէս սղորմեցաւ իրենց Աստուած հարցն իւրեանց, եւ ազգութիւննին կորսընելու վտանգէն ազատեց: Չէին գիտեր խեղճերն որ օր պիտի գար՝ յորում նոյն եկեղեցւոյն մէջ իւրեանց թոռներն ու թոռանց թոռները օտար լեղուով, օտար դաւանանքով, օտար ծէսով, օտար հագուստով, օտար հոգւով՝ պիտի աղօթէին (ինչպէս այժմ), եւ իւրեանց կրած տառապանքը՝ եւ ոչ մտքերն ձգող մի պիտի գտնուէր:

Վերջապէս Յովհաննէս վարդապետն եւս նոցա հետ ի միասին երկար ժամանակ լալէն ողբալէն. յետոյ՝ հան-

դարտեցուց ժողովուրդը, ելաւ բեմին վերայ, եւ մխիթարական սրտաշարժ քարոզ մի տուաւ: Յետոյ գնաց Նիկոլին առաջը, խնդրեց որ օրհնէ ժողովուրդը. եւ նա ելաւ խաչով աւետարանով օրհնութիւն տուաւ, խնդրեց որ մոռանան մինչեւ այն ժամանակ իւրեանց մէջ անցած բաները:

Մխիթարուեցաւ բարեսիրտ եւ անյիշաչար ժողովուրդը, գնացին ամենքը մի առ մի Նիկոլին աջը համբուրեցին, նորէն նորէն օրհնութիւնն առին, եւ փառք տալով Աստուծոյ՝ դարձան իւրեանց տեղերն:

Այս բաներուս լուրը քաղաքին մէջ որ տարածուեցաւ՝ ամենուն առ հասարակ մեծ ուրախութիւն եղաւ, մինչեւ Հրեաներն անգամ ուրախակից կլինէին Հայոց, ասելով նոցա անշուշտ՝ թէ իւրեանց նախնեացը Բարեւոնի գերութենէն դարձած ժամանակին ուրախու-

Թիւնը կլօսյելեն: Նաեւ ուրիշ քաղաք-  
ներէ, մինչեւ Աոստանդնուպօլսէն ան-  
գամ՝ ուրախակցութեան թղթեր եկան  
Իլլովցոց, եւ ասդիս անգլին ցրուած  
քաղաքացիներէն ոմանք նորէն դար-  
ձան ու բնակեցան Իլլովի մէջ:

Յովհաննէս Քաղիմիր Աեհաց թագա-  
ւորը լսելով այս բաներս՝ զարմացաւ,  
կանչեց Յովհաննէս վարդապետն ու  
քաղցրութեամբ խօսեցաւ հետը, գովեց  
նորա խաղաղասիրութիւնը, շնորհակալ  
եղաւ նորա ու պարգեւներ տուաւ: Իսկ  
նա ամբի մի Իլլով մնալէն յետոյ դար-  
ձաւ եկաւ Էջմիածին:

ԺԳ.

Նիկոլ յոյսը կտրեց այնուհետեւ այն  
ժամանակի ժողովուրդը կաթուղի ան-  
ներէն, եւ հանդարտութեամբ արաւ  
առաջնորդութիւնը քանի մի փարի,



ինչպէս կրկայէ նաեւ ժամանակակից  
 եւ անկողմնասէր պատմիչն մեր. վասն  
 զի այսպէս կրկերջացնէ նա Նիկոլին  
 պատմութիւնը. « Իսկ ժողովուրդքն Վո-  
 « վայ եւ Նիկոլ եպիսկոպոսն կան ի վե-  
 « րայ նոյն պայմանադրութեանն զոր  
 « սահմանեցին Փիլիպպոս Կաթողիկոսն  
 « եւ Յոհան վարդապետն Ռնչե ցայսօր,  
 « յորում զպատմութիւնս շարագրեցաք,  
 « ի թուականիս մերում հազար եւ հա-  
 « րիւր եւ ինն ( 1660 ) ի Քայիս ամսոյ  
 « տասն » :

Քայց Նիկոլի միտքը այն էր որ աչքե-  
 րը չիւակած՝ այնպիսի ճանապարհի մէջ  
 դնէ ժողովրդեան ընթացքն՝ որ քեթ  
 նոցա սրգիքը իւրեանց ազգութիւնն  
 ուրանան մոռանան, եւ ինքը իւր վախ-  
 ճանին հասնի: Քիր գրեց Հռոմ՝ Աղէք-  
 սանգր է Պապին, եւ խնդրեց որ Իլ-  
 վովի մէջ Հռովմայ ծախքովը գալրոց  
 բացուի Հայոց: Յայտնի բան էր թէ Պա-

պին փողովը կանգնուած դպրոցի վար-  
 Ժապետներն ու աշակերտները և  
 որչափան չէին կարող մնալ, հարկ էր որ  
 պատկան դառնային. ուստի զարմանք  
 չէ որ պապը ամենայնս իրով հաւանե-  
 ցաւ Նիկոյի խնդրոյն, եւ իւր հրամա-  
 նովն ու ծախքովը տասուերկու ձրիա-  
 վարժ աշակերտաց համար դպրոց մի  
 կանգնուեցաւ այն տեղ 1664 ին, Կղե-  
 մէս Գալանոս լատին կրօնաւորն նորա  
 մէջ դասատու դրուեցաւ: Այս այն ա-  
 նուանի Գալանոսն է որ մեր ազգը  
 տակնուկրայ անող գառնազգեստ գայ-  
 լերուն մէկը ճանաչուած էր նաեւ այն  
 Ժամանակ, ու Պօլսոյ Ժողովրդեան մէջ  
 մեծամեծ կռիւներ ձգելու համար՝  
 պատրիարքական հրամանաւ քշուած  
 էր անկից ու Հռովմ կրկենար՝ իբրեւ  
 փրոփականտայի վարժապետ. յայտնի  
 էր թէ Նիկոյի դպրոցին մէջ պապակա-  
 նութիւն սովրեցընելու ո՞րչափ յարմար

էր: Քալանոս երկու տարիէն մեռաւ: եւ նորա յաջորդեց նոյն դպրատան մէջ ( որ իրաւամբ կրնար ասուիլ «Էջնարան պատկանութեան») Վարդան Յունանեան ազգութաց եւ լեզուակորոյս քահանան՝ փրոփականտային ու Նիկոլի սիրելի աշակերտը:

Նիկոլ այս կերպով ազգասպան կենօք ասրեցաւ շատ տարի՝ մինչեւ որ 1681 ին վախճանեցաւ. տեղը անցաւ Յովհաննէս Քարմատանեանց, որ երեք տարի միայն արաւ առաջնորդութիւնը, եւ նորա յաջորդեց վերոյիշեալ Վարդան Յունանեանը: Նա իւր նախորդին ոչ տուած խոստմանցը եւ ոչ սուտ երգմանցը նայեցաւ, այլ բոլորովին բաժանեց Իլվովի ժողովուրդը էջմիածնայ Վաթուղիկոսին հաղորդակցութենէն ու պապական դարձուց, ազգային եկեղեցական կարգերը փոխեց փոփոխեց, բոլորովին լատինացուց, եւ Հռովմայ հա-

ճուրթիւնը վեր դնելով իւր խղճմտանքին տանջանքէն ու Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ նախնի վարդապետներուն բողոքմանէն, ազգիս այն գեղեցիկ ու պատուական մասը առաւ խառնեց օտար ազգաց մէջ ու կորսընցուց։ Կորսընցուց կասեմ, վասն զի այսօրուան օրս ազգասէր Հայ մի այն կողմերն որ երթայ, եթէ լեհերէն, գերմաներէն կամ լատիներէն չգլխտեր, եւ ոչ իսկ կարող կլինի այժմու Հայերուն հետ խօսիլ ու իմանալ ի նոցանէ իւրեանց նախնեաց լեզուովը՝ թէ Հայոց թաղն ու եկեղեցին Ելլովի ո՞ր կողմն է . . . Կմտնէ այն եկեղեցին որ իւր նախնեաց հաւատովը՝ յուսովը՝ սիրովն ու քարեգործութեամբն հիմնուած ու նոցա ազգային վսեմ արարողութիւններովն ու սրտաբուխ երգերովը պայծառացած էր երբեմն կտեսնէ մէջը լատինալեզու քահանաներ որ լատին եզանա-

կողմ' չափին հնչմամբ Հայերէն լեզուով  
 ժամերգութիւն կրկատարեն, առանց  
 սարկաւագի անձայն եւ անշուք պա-  
 տարագ կմատուցանեն . . . կըշուարի,  
 կտագնապի, կզարմանայ, տրտում տը-  
 խուր իւր տեղը դառնալու կիութայ,  
 գրեթէ վախենալով որ մի գուցէ ինքն  
 եւս յանկարծ նոյն խեղճութեան մէջ  
 ընկնի:

Այս դժբաղդ վիճակիս մէջ են ահա  
 Իլլիովի եւ բոլոր Ահհաստանի Հայերը,  
 ազնիւ որդիք այն Բաղրատունեաց այ-  
 րիացեալ մայրաքաղաքին՝ որ կարծես  
 թէ հիմնայատակ ու գետնաթաղ Հայ-  
 կաշէնէն, Արտաշատէն, Գուինէն, Ա-  
 րուանդաշատէն, Արժաւիրէն աւելի թը-  
 շուառ կամ աւելի երջանակ չուրդող'  
 կիսաւեր ու կիսականգուն մնացած է,  
 որպէս զի Ախուրեանին ողբաձայն խո-  
 խոջանքը միայն լսէ՝ բուերուն ու ջրղ-  
 ջիկներուն ախուր ձայներուն հետ:

[ 20 ]

Եւ այսքան թշուառութեան մի միայն  
սլատճառ՝ նիկոլ եպիսկոպոսին փառա-  
մոլութիւնն եւ ազգադաւ լատինամո-  
լութիւնը:





